

Գլխաւոր Էջ

Քազանի հանդիպումը անկիւնադարձային չեղա՞ւ



Յունիս 24-ին, Քազանի մէջ տեղի ունեցաւ Հայաստանի, Ատրպէյճանի եւ Ռուսիոյ նախագահներուն հանդիպումը, որուն մասնակցեցան նաեւ երեք երկիրներու արտաքին գործոց նախարարները:

Հայաստանի, Ատրպէյճանի եւ Ռուսիոյ նախագահներուն հանդիպման աւարտին ընդունուեցաւ միացեալ յայտարարութիւն մը, որուն մէջ մասնաւորաբար կ'ըսուի, որ երկիրներուն ղեկավարները հաստատած են շարք մը հարցերու շուրջ փոխադարձ ըմբռնման ձեռքբերումը, հարցեր, որոնց լուծումը կը նպաստէ հիմնարար սկզբունքներու համար անհրաժեշտ պայմաններու ստեղծումին: Յայտարարութեան մէջ նշուած է նաեւ, որ Հայաստանի եւ Ատրպէյճանի նախագահները իրենց երախտագիտութիւնը յայտնած են ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի համանախագահող երկիրներ Ռուսիոյ, Միացեալ Նահանգներու եւ Ֆրանսայի ղեկավարներուն՝ Լեոնային Ղարաբաղի տագնապի լուծման նկատմամբ անոնց մնայուն ուշադրութեան համար եւ բարձր գնահատած են Ռուսիոյ նախագահին անձնական ջանքերը համաձայնութեան հասնելու ուղղութեամբ:

Նախքան Քազանի հանդիպման կայացումը, Ռուսիոյ արտաքին գործոց նախարարութենէն աղբիւր մը՝ ռուսական «Քոմերսանթ» օրաթերթին յայտնեց, որ Հայաստանի եւ Ատրպէյճանի նախագահները Քազանի մէջ իրենց հանդիպումին ընթացքին պիտի ստորագրեն փաստաթուղթ մը, որ ղարաբաղեան հակամարտութեան կողմերը իրաւաբանօրէն պիտի պարտաւորեցնէ հրաժարիլ տագնապի գօտիին մէջ ուժի կիրարկումէն:

«Մինչեւ հիմա Պաքուի եւ Երեւանի համար ընդունելի եղած են միայն առանձին որոշ սկզբունքներ: Սակայն, միայն հիմա կարելի եղած է կողմերը համոզել



սկզբունքները ամբողջությամբ ընդունելու, իսկ այս ուղղությամբ որոշիչ յառաջընթացը արձանագրուած է Մարտին՝ Սոչիի հանդիպումին ժամանակ: Յաջողութեան երբեք այսքան մօտ չենք եղած: Համաձայնեցուած սկզբունքները կը նախատեսեն փուլային ընթացք դէպի լուծում՝ իրատեսակ «ճամբու քարտէս»: Նախ հիմնական սկզբունքները պիտի ստորագրուին, ապա Հայաստանն ու Ատրպէյճանը, Ռուսիոյ, Ֆրանսայի եւ Միացեալ Նահանգներու միջնորդութեամբ պիտի աշխատին խաղաղութեան համաձայնութեան վրայ: Այնուհետեւ, Երեւան պետք է վերադարձնէ պատերազմի ատեն գրաւուած Ատրպէյճանական հողերը, որոնց շարքին՝ Ֆիզուլիի, Չանգելանի, Աղտամի, Ճեպրայիլի, Կուբաթլիի եւ Քելբաջարի շրջաններն ու Լաչինի շրջանէն 13 գիւղ: Այդ տարածքներուն մէջ, անվտանգութիւնը պիտի ապահովեն միջազգային խաղաղապահ ուժերը, իսկ Լաչինի մէջ պիտի գործէ Հայաստանն ու Լեռնային Ղարաբաղը իրարու միացնող միջանցք: Ղարաբաղի կարգավիճակը պիտի որոշուի քանի մը տարի ետք՝ հանրաքուէի միջոցով, որ տեղի պիտի ունենայ գաղթականներու վերադարձին պարագային, սակայն այստեղ կարելորն այն է, որ Պաքու եւ Երեւան պիտի հրաժարին վիճելի հարցերու լուծման համար ուժի կիրարկումէն...»:

Հայրենի օրաթերթ «Ազգ»-ը՝ իր 25 Յունիսի թիւին մէջ դիպուկ կերպով գրեց. «Քազանում մկնիկ անգամ չծնուեց...» վերտառութեամբ յօդուածը, ուր յատկապէս կ'ըսուէր. «Իրականութիւնը՝ տապալուած Քազանն է... Եթէ վերյիշենք, թէ ինչ ակնկալիքներ կային ԵԱՀԿ Մինսքի խմբի համանախագահող երկրներում, եւրոպական տարբեր ատեաններում այս հանդիպումից, եւ նորից վերընթերցենք այդ յայտարարութիւնը, ապա միանշանակ է՝ Քազանը կամ «յաջողուած գովազդային արշաւ էր», կամ կողմերից մէկի ոչ կառուցողականութեան դրսեւորում: ... Չմոռնանք, որ Ալիեւ կրտսերը, ընդամենը հանդիպման նախորդ օրը՝ Euronews-ին տուած հարցազրոյցում շեշտեց, որ իր երկիրը չի պատրաստուում որեւէ բան տալ «իր երկրին պատկանող» տարածք վերադարձնելու դիմաց...»:

NEWS.am թերթը գրեց իր Յունիս 27-ի համարին մէջ. «Իրադրութեան սրում, տխրահոշակ «հիմնարար սկզբունքներն» անպայման համաձայնեցնելու կոչեր, զանգեր... Եւ Հայաստանի, Ատրպէյճանի եւ Ռուսաստանի նախագահների քազանեան հանդիպման ձախողում: Ինչպէս միշտ, եղաւ աշխարհաքաղաքական ամենաբարձր մակարդակի շատախօսութիւն, բայց ամէն ինչ վերադարձաւ ի շրջանս իւր: Իսկ պատճառը չափազանց ակնյայտ է. պաթոլոգիական կասկածամտութեամբ տառապող ալիեւեան կլանը պարզապէս պատրաստ չէ դարաբաղեան հակամարտութեան խաղաղ կարգաւորման: Աշխարհի հզօրները ձեւացնում են, թէ իբր չեն հասկանում այս պարզ ճշմարտութիւնը:

Հայրենի «Ժամանակ» թերթի վերլուծականը՝ Յունիս 25-ի թիւին մէջ, կը կրէր հետեւեալ վերտառութիւնը՝ «Քազանը մուկ ծնեց, թէ՛ մուկը սատկեց Քազանում», ուր ի մասնաւորի գրուած է. «Հայաստանն ու Ատրպէյճանը որեւէ փաստաթուղթ՝ կարգաւորման սկզբունքների վերաբերեալ, չստորագրեցին: Դա ինչ որ տեղ նաեւ սպասելի էր, դատելով հանդիպման նախօրէին Հայաստանի եւ Ատրպէյճանի



նախագահների Euronews-ին տուած հարցազրոյցներից, որտեղ նրանք խօսում էին դիմացի կողմին միակողմանի չզիջելու մասին: Այդպիսով, ըստ էութեան, կարելի է ասել, որ դարաբադեան հակամարտութեան կարգաւորման բեկումնային հանգրուանը չստացուեց, եւ այդ իմաստով պէտք է արձանագրել, որ փաստօրէն մենք կանգնած ենք կարգաւորման մի որոշակի փուլ թերթելու իրողութեան առաջ»

Մինչդեռ Յունիս 24-ին՝ ռուսական լրատուամիջոցները, մասնաւորապէս «Քոմերսանթը», ըստ Ա1+ թերթին, գրեր էին, թէ հակամարտութեան կարգաւորման համար գործելու է «Ճանապարհային քարտէս»:

Թերթի դիւանագիտական աղբիւրի փոխանցումով՝ սկզիզբը պիտի ստորագրուին հիմնական սկզբունքները, ապա կողմերը ՌԴ-ի, ԱՄՆ-ի եւ Ֆրանսայի միջնորդութեամբ պիտի սկսին աշխատիլ խաղաղ պայմանագրի վրայ: Ըստ թերթի՝ Հայաստանը պարտաւորուելու է վերադարձնելու Լեռնային Ղարաբաղին յարակից 6 շրջանները, ինչպէս նաեւ Լաչինի 13 գիւղեր, պահպանուելու է կապը Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի միջև: Անվտանգութիւնն ապահովելու են խաղաղապահ ուժերը:

Արցախի մէջ, մի քանի տարի յետոյ անցկացուելու է հանրաքուէ, որը, սակայն, պիտի իրականացուի միայն փախստականներու վերադարձի պարագային: Կողմերը հրաժարելու են ուժի կիրառումէն, եւ ատիկա ամրագրուելու է իրաւաբանօրէն:

Նախագահներու ընդունած յայտարարութիւնը՝ երեւութապէս անմեղ թուալով, այնուամենայնիւ մտածելու տեղի կու տայ՝ մասնաւորապէս հետեւեալը. «Պետութիւններու ղեկավարները արձանագրեցին շարք մը հարցերու շուրջ փոխըմբռնման ձեռքբերումը, որոնց լուծումը պիտի նպաստէ Հիմնական սկզբունքներուն հաւանութիւն տալու համար պայմաններու ստեղծմանը»:

Հարց կը ծագի, թէ ի՞նչ կէտերու շուրջ է եղած այդ «փոխըմբռնման ձեռքբերումը», որուն մասին ակնյայտօրէն պարզաբանում ընելէ կը խուսափի ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանը:

Կը խորհինք որ ներկայիս, հրամայական գերինդիր է որ Հայաստանի Հանրապետութեան ղեկավարութիւնը՝ դիւանագիտական նոր շրջադարձով, ամէն կերպ աշխատի Լեռնային Ղարաբաղը դարձնելու բանակցային կողմ, եւ de facto ազատագրուած հայրենական տարածքները ամրագրելու նաեւ de jure կարգավիճակով:

Կրկնութեան գնով պիտի շեշտել, որ ոեւէ իշխանաւորի կամ իշխանութեան իրաւունք չէ տրուած՝ արեամբ ձեռքբերուածը զիջելու թշնամիին, կամ՝ սակարկութեան առարկայ դարձնելու հայրենական որեւէ տարածք: Բոլոր պարագաներուն, իշխանութիւնները ենթակայ կը մնան զիրենք ընտրած ժողովուրդի կամքին: Նմանապէս, պիտի ընդգծել որ անոնք պարտաւոր են հաշուետու ըլլալու ժողովուրդին՝ իրենց մէն մի քայլին համար, մանաւանդ եթէ խնդիրը կը վերաբերի

մեր ժողովուրդին համար խիստ ճակատագրական հարցերու, ինչպիսին է Արցախեան հիմնախնդիրը: Խորհրդապահութիւնը նման հարցերու վերաբերեալ տեղի կու տայ միայն կասկածամտութեան՝ ՀՀ ղեկավարութեան վարած պարտուողական եւ մեր ժողովուրդին համար ոչ-ընդունելի քաղաքականութեան առնչութեամբ...:

Երան Գույումճեան

Համայնքային

Մանկապատանեկան Գեղագիտական Դաստիարակութիւնը Տիկ. Թաթիանա Ֆերահեանի հետ



Նիկոսիոյ Նարեկ վարժարանի յարկին տակ՝ 2010-2011 ուսումնական տարեշրջանին եւ ամառնային դպրոցի ծրագիրէն ներս, Արուեստի հմուտ ուսուցչուհի Տիկ. Թաթիանա Ֆերահեան կրցաւ լայն հետաքրքրութիւն ստեղծել հայ մանուկներու եւ պատանիներու մօտ՝ արուեստի եւ ձեռարուեստի դասերուն նկատմամբ: Նոյնը ան կրցաւ ընել ՀԲԸ Միութեան Նիկոսիոյ ակումբին մէջ՝ շաբաթական դրութեամբ: Յայտնի փաստ է որ գեղագիտական դաստիարակութիւնը ընդհանրապէս եւ գեղանկարչական դասընթացները մասնաւորապէս կը զարգացնեն գեղեցիկի ճաշակը մանուկներու եւ պատանիներու մօտ, պլացք կու տան անոնց ստեղծագործական երեւակայութեան, կը հարստացնեն անոնց ներաշխարհը, կը նրբացնեն զգացումները...: Մէկ խօսքով՝ բարերար ազդեցութիւն կ'ունենան անոնց հոգեմտաւոր, ընկերային, մարդկային-բարոյական աճումին վրայ:

Փափաքելով մօտէն ծանօթանալ Թաթիանա Ֆերահեանի վերոնշեալ

աշխատանքին ու փորձառութեան հետ, կապի մէջ մտանք իրեն հետ եւ ունեցանք հետեւեալ հետաքրքրական հարցազրոյցը.-

Նշենք, որ Թաթիանա Ֆերահեան ծնած ու մեծցած է Լիբանանի մէջ՝ քաղաքացիական պատերազմի տարիներուն: Իր ընտանիքին հետ միասին ապաստան գտնելով Կիպրոսի մէջ, ան, ինչպէս ինք կ'ըսէ, իր գոյութենական անհանգստութիւնը փարատելու համար ընտրած է նուիրուիլ արուեստին: Շուտով յայտնաբերած է որ արուեստը ինքնարտայայտման միջոց է, հասկնալու եւ հունաւորելու համար իր ներքին տազնապներն ու տուայտանքները, ինչպէս նաեւ՝ իր ձգտումները, յոյսերն ու իտեալները...: Իր երկրորդական ուսումը ան ստացած է Մելգոնեան Կրթական Հաստատութեան մէջ, ապա յաճախած է Frederick Institute of Technology, հետեւելով Graphic Design-ի դասընթացներուն: Այնուհետեւ, ստացած է Պսակաւոր Արուեստից վկայականը (Bachelor of Arts) Նիւ Եորքի Empire State College-էն, իսկ Մագիստրոսի վկայական՝ Denver-ի համալսարանէն: Թաթիանա Ֆերահեան մասնակցած է բազում ցուցահանդէսներու Կիպրոսի մէջ: Նմանապէս, ան ընտրուած է Կիպրոսը ներկայացնելու միջազգային ցուցահանդէսներու՝ Փէքինի, Ադեքսանդրիայի, Աթէնքի, Հելսինքիի, Պերլինի, Մատրիտի, Սթրազպուրկի, Քորէայի, Լոնտոնի, Նիւ Եորքի, Իտալիոյ, Նիտեռլանտներու, Ռումանիոյ եւ Պոլսոյ մէջ:



Միրելի Թաթիանա, ի՞նչ գլխաւոր նպատակ կը հետապնդես՝ մանուկներուն արուեստ եւ ձեռային աշխատանք սորվեցնելով:

Հիմնականին մէջ, ես կ'ուզեմ օգնել պզտիկներուն, որ անդրադառնան թէ արուեստը իրենց հնարաւորութիւն կու տայ՝ իրենց շուրջիներուն հետ բաժնելու իրենց ստեղծագործական կարողութիւնն ու երեւակայութիւնը: Արուեստի միջոցով, իրենք կրնան արտայայտել իրենց զգացումները, բաժնել իրենց երազները ուրիշներուն հետ եւ ներշնչել զանոնք:

Ինչպէ՞ս կրնաս հետաքրքրութիւն արթնցնել անոնց մօտ արուեստի դասերուն նկատմամբ:

Ամենակարեւորը այն է, որ աշակերտներուս կը փոխանցեմ այն գիտակցութիւնը, որ ես բացարձակապէս կը սիրեմ ա՛յն ինչ կ'ուսուցանեմ եւ երբեք չեմ թաքցնէր իմ խանդավառութիւնս: Այդ խանդավառութիւնը կը փոխանցուի կարծեք աշակերտներուս եւ կը խթանէ զանոնք: Նմանապէս, սկիզբէն իսկ, ամէն ինչ կ'ընեմ որ աշակերտներս հասկնան, որ չկայ միայն մէկ արուեստի տեսակ: Ինծի համար, առաջնահերթութիւն է՝ աշակերտներուս ծանօթացնել, որքան որ կրնամ, արուեստի առաւելագոյն տեսակներ: Փոխանակ Արուեստի Պատմութիւն սորվեցնելու ձանձրացուցիչ եղանակով, կը նախընտրեմ գտնել ինքնատիպ եւ զուարճալի ձեւեր նիւթը ներկայացնելու համար, որպէսզի աշակերտներ մղուին զայն սորվելու: Կը փորձեմ պատմութիւնը միացնել իրենց ծրագրին հետ: Այս ձեւով դասը կը դառնայ հետաքրքրական եւ հաճելի: Կը փորձեմ նաեւ իրենց ներկայացնել արուեստի պատկերներու եւ իրերու լայն տեսականի մը, նաեւ՝ տեսասալիկներ կամ տպուած օրինակներ՝ արուեստի այն գործերու, որոնք կապ ունին իրենց աշխատանքին հետ: Պէտք է նաեւ նշեմ, որ աշակերտներուս լաւ խթան կը հանդիսանայ՝ իրենց աշխատանքին նկատմամբ արտայայտած գովեստս, որ կը բարձրացնէ իրենց ինքնարժեւորումը եւ կ'ամրապնդէ իրենց կարողականութիւնը: Կարելոր կը նկատեմ նաեւ ցուցադրել իրենց արուեստի գործերը, ցոյց տալով որ ես հպարտ եմ իրենց ի գործ դրած ճիգերուն համար:



Արդեօ՞ք կը քաջալերէք զանոնք, որ առանձին աշխատին, թէ խումբով:

Թէեւ կարելոր է քաջալերել իրենց անհատականութիւնն ու անկախութիւնը, սակայն ես երբեմն կը խնդրեմ որ աշխատին զոյգերով, կամ փոքր թէ մեծ խումբերով: Խմբային աշխատանքը կը զօրացնէ իրենց ընկերային եւ զգացական ունակութիւնները, կ'օգնէ զարգացնելու իրենց հաղորդակցութեան ձիրքերը եւ կրնայ բարելաւել վստահութիւնը: Շատ կարելոր է, նմանապէս, որ անոնք սորվին

կապ հաստատել իրարու հետ, գաղափարներ փոխանակել եւ յարգել մէկը միւսին կարծիքներն ու կարողութիւնները:

Արուեստի դասերը ի՞նչ կը մշակեն երախաներու մօտ ընդհանրապէս:

Արուեստը հասկնալը եւ անոր մաս առնելը կրնան օգնել իրենց, որ աւելի լաւ գնահատեն զիրենք շրջապատող աշխարհը, որ կարենան զարգացնել այնպիսի ձիրքեր, զորս այլապէս չյայտնաբերէին գուցէ: Արուեստը կ'օգնէ մանուկներուն որ զարգացնեն իրենց ինքնարտայայտութիւնը, երեւակայութիւնը եւ ստեղծագործական կարողութիւնը, ինչպէս նաեւ՝ քննական մտածողութիւնը եւ խնդիր լուծելու ձիրքերը: Նորագոյն ուսումնասիրութիւնները կը փաստեն, որ՝ երբ մանուկներ բաց են գեղարուեստական արտայայտութեան կերպերու, կը կարողանան բարելաւել իրենց կեդրոնանալու եւ համակարգելու կարողութիւնները:

Ի՞նչ կը ստրվեցնէ քու փորձառութիւնդ՝ մանուկներուն արուեստին նկատմամբ ունեցած վերաբերմունքին մասին:



Անոնց մեծ մասը կը թուի հրապուրուած ըլլալ արուեստով, եւ պարզապէս կը սիրէ անմիջական շփման մէջ մտնել անոր հետ: Անոնք շատ հետամուտ են նոր բաներ փորձելու: Շատ սքանչելի արուեստի գործեր արտադրելով առ այսօր, անոնք նկատելիօրէն բարելաւած են իրենց ինքնարժեւորումը եւ վերաբերմունքը արուեստին նկատմամբ:



Շնորհակալութիւն կը յայտնենք տաղանդաւոր արուեստագէտ եւ նուիրեալ մանկավարժ Թաթիանա Ֆերահեանին, իրեն սրտանց մաղթելով անսպառ եռանդ ու կորով եւ նորանոր յաջողութիւններ՝ արուեստի եւ ուսուցչական խստապահանջ ասպարէզներէն

ներս:

Երան Գույումճեան (բնագիրը՝ անգլերէն)

Եաննոս Գույումճեան կ'ընտրուի լաւագոյն կիպրացի սահուկորդը



27 Յունիս, 2011-ին՝ Կիպրոսի Ski Federation-ի կազմակերպած ձեռնարկին, որ տեղի ունեցաւ Ողիմպիական Կեդրոնին մէջ, կիպրացի Եաննոս Գույումճեան ընտրուեցաւ Լաւագոյն Կիպրացի Երիտասարդ Սահուկորդը:

«Ազատ Խօսք»ը սրտագին կը շնորհաւորէ Եաննոս Գույումճեանը այս պատուաբեր

յաղթանակին համար, իրեն մաղթելով նորանոր բարձունքներու նուաճում այս դժուարին մարզաձեւին մէջ:

Սփիւռքահայ Պատանիներ Մայր Հայրենիքի մէջ



Այս օրերուն, Հայաստան կը գտնուին՝ «Արի Տուն» ծրագրի շրջանակներէն ներս, Սփիւռքահայ պատանիներ, որոնց մէջ են նաեւ Նարեկ վարժարաններէն մեր շրջանաւարտները: Անոնք կ'այցելեն Հայաստանի տեսարժան, պատմական վայրերը, կը ծանօթանան իրենց հայրենի քոյրերուն եւ եղբայրներուն հետ եւ կ'անցընեն անմոռանալի օրեր մեր Մայր Հողին վրայ:

Այս մասին կ'անդրադառնայ հետեւեալ յօդուածը, զոր կ'արտատպենք ամբողջութեամբ.-

Սեւանայ լիճի մէջ լողալը երազանք էր շատերուն համար... Սփիւռքահայ պատանիներէն շատերը խոստովանեցան, որ իրենց համար Արարատէն ետք Սեւանայ լիճը հայրենիքի երկրորդ խորհրդանիշն է, ու եթէ Բիբլիական լեռը կրնան միայն հեռուէն տեսնել, ապա Սեւանայ լիճին մէջ կրնան լողալ: «Արի Տուն»ի մասնակիցները լիճը նոյնիսկ համեմատեցին հայ ժողովուրդի հետ՝ ըսելով, որ, ճիշդ է, հայերը փոքրաթիւ են, բայց ծովու, ովկիանոսի չափ մեծ սիրտ, հոգի ու մշակոյթ ունին: *Այս մասին կը հաղորդէ «Հայերն Այսօր»ը:*

Կէսօրին արիտունցիները արդէն Սեւանայ լիճի մէջ էին: Նախ այցելեցին Սեւանի վանական համալիր, ուր՝ խումբին միացած գանատահայ պատանիներու «Տէր ողորմեայ»ի հոգեգմայլ երաժշտութիւնը՝ աստուածային լոյսով ողողեց Սբ. Աստուածածին եկեղեցին ու վարակեց բոլորը. հայաստանցիի եւ սփիւռքահայու հոգեպարար երգը իւրատեսակ միասնութեան ներքող դարձաւ առ Աստուած:



Մեւանավանքի համալիրին մէջ իւրատեսակ աշխուժութիւն կը տիրէր: Զբօսաշրջիկներու զարմացած ու հիացական հայեացքներու ներքոյ մասնակիցները կը նկարուէին, կը կատակէին եւ թերակղզիի բարձրութենէն կը զմայլէին Գեղամայ ծովու գեղեցկութեամբ:

Տասնհինգամեայ իրաքահայ պատանի Անտրէ Մարգարեանի բնորոշմամբ՝ Մեւանայ լիճի անոյշ գոյնը կարծես երկնքի արտացոլանքը ըլլայ:

Շատ յուզուած եւ ուրախ էր յորդանանահայ պատանի Հրակ Մարգարեանը, որ լողալ շատ կը սիրէ բայց երբեք չէր մտածեր, որ կրնայ լողալ Մեւանայ լիճին մէջ:

Տունդարձին բոլորը շատ յոգնած էին, բայց նոյնիսկ յոգնածութիւնը չէր կրնար խանգարել զիրենք կատակելու ու անդադար պատմելու իրենց վառ տպաւորութիւնները:

Հաղորդագրութիւն



ARMENIAN CULTURAL AND EDUCATIONAL SOCIETY

HAMAZKAYIN - CYPRUS

KRAVADZ OR

SEPTEMBER 23 2011

DETAILS TO FOLLOW



Հաղորդագրութիւն

Կիպրոսի Պետական Համալսարան Հայերէն Լեզուի Դասընթացը

Հաճոյքն ունինք փոխանցելու, թէ անցեալ տարեշրջանին Կիպրոսի Պետական Համալսարանէն ներս սկսած Հայերէն լեզուի մասնաժամ դասընթացները ամբողջացան մեծ յաջողութեամբ:

Սկսնակ եւ յառաջացած մակարդակի դասարաններու ուսումնական նոր տարեշրջանի դասընթացները պիտի վերսկսին Սեպտեմբեր 2011-ին:

Արձանագրութեանց եւ յաւելեալ մանրամասնութիւններու համար դիմել Երեսփոխանական Գրասենեակ հեռ. 22-454540 մինչեւ 14 Սեպտեմբեր 2011:

Երեսփոխանական Գրասենեակ
30.06.2011

Փանէփիսթիմիօ Կիպրօս Մաթիմատա Արմենիկի Ճլօժժաս

Ե՛ւոսմէ տի խարձ յա իս իս Ենիմերօժոսսոսմէ զո՛ւ տա մաթիմատա Արմենիկի յլօժժաս մերիկի ֆօլիթիշի, տա զօթօ՛ւ չէկինիսան իսթօ Փանէփիսթիմիօ Կիպրօս թէրս, սոմփլիրօթիկան մէ մեղաղի Եփիտիչիա:

Օի տաճիշ յիա Եթիթթեժօ աղիարիօն կաի թրօխօրիմէնօն յիա տօ կաիօսուրյիօ աքաժիմաիկօ Եթօժ թա չանաղիսօսն տօ Տէթթէմբրիօ տօ 2011:

Ճիա Եղղաղէժ կաի թերիսօթէրէշ թլիիրօֆօրիէշ թառաքալօսմէ զօթօժ Եթիքօիօնիսէտէ մէ տօ Ճրաֆիօ տօս Արմէնիօս Եքթրօսօժօթօս տօ տիղ. 22-454540 մէչրի տիշ 14 Տէթթէմբրիօս 2011:

Ճրաֆիօ տօս Արմէնիօս Եքթրօսօժօթօս
30.06.2011

University of Cyprus Armenian Language Courses

We have the pleasure to inform you that the part time Armenian language courses, which began last year at the University of Cyprus were completed with great success.

Beginner and advanced level classes for the new academic year will re-commence in September 2011.

For enrollment and more information kindly contact the Office of the Armenian Representative on tel. 22-454540 until 14th September 2011.

Office of the Armenian Representative
30.06.2011

Խմբագրական

Ու՞ր Կ'երթայ Հայկական Դիւանագիտութիւնը



Ինչպէս յայտնի է, շուրջ չորս տարի տեւած Ղարաբաղի ազատագրական, հայրենաստիրական հերոսական պատերազմը, որ հպարտութեամբ լեցուց ողջ հայութեան սրտերը, վերջ գտաւ 1994 թուականի Մայիսին կնքուած հրադադարի համաձայնութեան ստորագրութեամբ:

Այս համաձայնագիրը կնքուեցաւ Լեռնային Ղարաբաղի, Ատրպէյճանի եւ Հայաստանի Հանրապետութեանց կողմէ Պիշքէկի մէջ, եւ ստացաւ «Պիշքէկեան համաձայնագիր» անուանումը: Հայկական կողմը փառապանծ յաղթանակ տարած էր, շնորհիւ հազարաւոր հայ ազատամարտիկներու աննկուն ոգիին, անոնց թափած սուրբ արեան, ինչպէս նաեւ՝ բազում զոհողութիւններու եւ զրկանքներու...: Հէտար Ալիւր այդ օրերուն կը խնդրէր բոլորին, որպէսզի միջնորդէին որ Հայաստանը դադրեցնէր իր ռազմական յաղթարշաւը...:

Սակայն, այդպէս ալ, այդ զինադադարի կնքումը չի կրցաւ ամրագրել հայկական կողմի յաղթանակը, չի կրցաւ ամրագրել Լեռնային Ղարաբաղի 12,000 քմ.-նոց ազատագրուած տարածքի վերջնական կարգավիճակը, որ տեսակ մը ձգուեցաւ պատահականութեան...:

Արդեօ՞ք ասիկա պիտի ըլլար նախաքայլը՝ դիւանագիտական յետագայ նահանջներու, թէ պարտութեանց...:

Այնուհետեւ, մենք ունեցանք նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի 1997-ի լուծման փուլային տարբերակը, որ նկատուեցաւ անոր պարտութեան դիրքորոշումը Լեռնային Ղարաբաղի խնդրի կարգաւորման գծով եւ պատճառ դարձաւ իր հրաժարումին:

Հայաստանի երկրորդ նախագահ Ռոպերթ Քոչարեանի օրով ալ, յառաջ քաշուեցաւ 1998-ի «ընդհանուր պետութիւն» տարբերակը, ուր յստակօրէն կը նշուէր. « Լեռնային Ղարաբաղը հանդիսանում է հանրապետութեան ձեւի պետական եւ տարածքային



կազմաւորում եւ Ատրպէյճանի հետ միասին կազմաւորում է ընդհանուր պետութիւն՝ նրա միջազգայնօրէն ճանաչուած սահմաններում»:

Բայց ուշագրաւը այն է, որ Ատրպէյճանը չբաւարարուեցաւ այսքանով, մերժեց «ընդհանուր պետութեան» առաջարկը եւ քննարկման առարկայ դարձուց՝ Մեղրիով Նախիջեւանը Ատրպէյճանին կապող միջանցքի ստեղծումը, կամ՝ «Մեղրիի տարբերակը»: 2001-ի Ապրիլին՝ անգլիական հեղինակաւոր « The Economist» ամսագրին մէջ, մասնաւորապէս կը նշուէր, թէ Ղարաբաղեան ապագայ կարգաւորման ուրուագիծերը արդէն յայտնի դարձեր էին: Հայերը պիտի վերադարձնէին Ատրպէյճանցիներուն իրենց «գրաւած» 7 շրջաններէն 6-ը: Լեռնային Ղարաբաղը եւ անոր կից Լաչինի շրջանը պիտի ստանային ինքնակառավարման կարգավիճակ: Եւ, որպէս փոխհատուցում, Ատրպէյճանը պիտի ստանար միջազգայնօրէն վերահսկուող ճանապարհ, որ Ատրպէյճանը պիտի կապէր Նախիջեւանի հետ (այսինքն, պիտի անցնէր ՀՀ Մեղրիի տարածքով):

Մեղրիի տարբերակի լուազոյն գնահատականը պիտի տար Հայոց սպարապետ Վազգէն Սարգսեանը, որ դեռ 1999-ի Մեպտեմբերին, նախքան իր եղերական սպանութիւնը, պիտի զգուշացնէր. « Եթէ տաք Մեղրին, ձեր արեան խառնում էք այն պենզինը, որը չի թունաւորելու, պայթեցնելու է ձեր գանկը»:

Այնուհետեւ, Լեռնային Ղարաբաղի կարգաւորման ուղղուած դիւանագիտական պարտաւորական գործընթացը քայլ առ քայլ պիտի ուղղուէր Մատրիտեան հայակործան սկզբունքներու քննարկումին, որոնց նորացուած տարբերակը պիտի հրապարակուէր Յունիս 2009-ին:

Մատրիտեան 6 հիմնարար սկզբունքները կը բաղկանան հետեւեալ կէտերէ.- 1/ Լեռնային Ղարաբաղը շրջապատող տարածքներու վերադարձ Ատրպէյճանի հսկողութեան, 2/ Լեռնային Ղարաբաղի միջանկեալ կարգավիճակի տրամադրում, որ պիտի ընդգրկէ անվտանգութեան եւ ինքնակառավարման երաշխիքներ, 3/ Հայաստանի Հանրապետութեան եւ Լեռնային Ղարաբաղի միջեւ միջանցքի ապահովում, 4/ Լեռնային Ղարաբաղի վերջնական իրաւական կարգավիճակի յետագայ որոշում, իրաւականօրէն պարտաւորեցնող կամարտայայտութեան միջոցով, 5/ Ներքին տեղահանուած անձանց եւ փախստականներու իրենց նախկին մշտական բնակութեան վայրերը վերադառնալու իրաւունք, 6/ Անվտանգութեան միջազգային երաշխիքներ, որոնք պիտի ներառեն խաղաղապահ գործողութիւն:

Մատրիտեան այս հայակործան սկզբունքները մեկնաբանելով, Շուշիի առանձնակի գումարտակի հրամանատար Ժիրայր Սեֆիլեանը պիտի նկատէր արդարացիօրէն. «...Եթէ հայերը չեն վերահսկելու այդ տարածքները, ապա նշանակում է, որ մօտ ապագայում ո՛չ Արցախ կը լինի, ո՛չ էլ՝ Հայաստան»:

Վերջերս ալ, 2011-ի Յունիս 24-ին՝ կայացաւ Քազանի հանդիպումը՝ Հայաստանի, Ատրպէյճանի եւ Ռուսաստանի նախագահներուն միջեւ, որուն աւարտին ընդունուէր է համատեղ, տեսակ մը ոչինչ ըսող, կամ թաքնիմաստ յայտարարութիւն...:

Պաշտօնական յայտարարութիւններէն բացի, կարելորութեամբ պէտք է ընդգծենք, որ՝ Հայաստանի քաղաքացիներուն համար բացարձակ գաղտնիք է, թէ ի՞նչ կը



քննարկեն միջնորդները, Հայաստանը, Ատրպէյճանը նման հանդիպումներուն, կամ՝ անոնց աւարտին, ի՞նչ կը յայտնեն Ղարաբաղի իշխանութեան, որուն ճակատագիրը կ'առաջադրեն տնօրինել առանց անոր մասնակցութեան...: Ո՛չ ալ հրապարակային բանավեճ տեղի կ'ունենայ այս կարեւոր հիմնախնդրին մասին: Ամէն ինչ կարծէք խորհրդաւորութեան քողին տակ է թաքնուած...:

Յամենայնդէպս, այսօր, երբ կը դիտարկենք Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգաւորման գործընթացը, զարմանալ ու ընդվզիլ միայն կրնանք, որ՝ ինչպէ՞ս Հայաստանի Հանրապետութեան իշխանաւորները կրնան արտօնել, որ պարտաւոր կողմը իր կամքը թելադրէ յաղթող կողմին, եւ՝ «փոխզիջումնային» քաղաքականութեան անուան տակ,

պատրաստակամութիւն յայտնել՝ երթալու միակողմանի զիջումներու, քննարկել ազատագրուած հայրենի տարածք վերադարձնելու առաջարկներ, անտեսելով Հայաստանի հանրապետութեան եւ ի մասնաւորի Լեռնային Ղարաբաղի ժողովուրդին կամքը...:

Պիտի կարենա՞նք վերջապէս շրջադարձ կատարել անձնատուական եւ պարտաւորական այս քաղաքականութենէն եւ լիարժէք Տէրը դառնալ մեր յաղթանակին՝ ազատագրուած հայրենական հողին: Պիտի կարենա՞նք զգօն ու հեռատես դիւանագիտութեամբ ամրագրել մեր նորագոյն պատմութեան այն դարակազմիկ յաղթանակը, զոր նուաճեցինք շնորհիւ հայ ազատամարտիկներու մարտունակ, հերոսական ոգիին, շնորհիւ անոնց թափած սուրբ արեան: Թէ՞՝ դիւանագիտական սեղաններու շուրջ, պիտի զիջինք հայրենեաց հողը եւ անփառունակ վախճանի դատապարտենք մեր յաղթանակը, զայն վերածելով պարտութեան, անգամ՝ ազգային դաւաճանութեան...:

Երան Գույումճեան

Հարցազրույց

«ԻՐԱՏԵՍ de facto»Ի ՀԱՐՑԱԶՐՈՅՑԸ ՔԱՂԱՔԱԳԷՏ, «ՄՈՏՈՒՄ ՎԻՎԵՆՏԻ» ԿԵՂՐՈՆԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԱ ՊԱՊԵԱՆԻ ՀԵՏ .



Նախագահ Վուտրո Ուիլսոնի Իրաւարար Վճռի Հետքերով. «Ամերիկացիները Չարմանում Են՝ Եթէ Այդքան Փաստաթղթեր Ունէք, Ինչո՞ւ Էք Լռում»
ԱՄՆի նախագահ Վուտրո Ուիլսոնի 1920 Նոյեմբեր 22ին ընդունած իրաւարար վճիռը բազմաթիւ փաստաթղթերի շարքում ամենահիմնաւորն է, որի վրայ խարսխուում է հայոց պահանջատիրութիւնը: Բացառիկ փաստաթուղթը երբեւէ չի դրուել շրջանառութեան մէջ: Ամերիկեան արխիւներից պեղել-հանելով, քաղաքագէտ Արա Պապեանը փաստաթուղթը Հայաստան է բերել՝ 90 տարի անց այն վերահրատարակելու նպատակով:

ԱՐՄԻՆԷ ՍԻՄՈՆԵԱՆ.- Անտեսելով բոլոր հակադարձումները, Ձեզ յաջողուեց տարիների ընթացքում գոնէ հայ հասարակութեանը իրազեկել այս կարեւորագոյն փաստաթղթի մասին: Շեշտում էք՝ իրաւարար վճռի պարտադիր, անբեկանելի ու անժամանցելի լինելը ստորագրած երկրների համար, մասնաւորապէս ԱՄՆի, քանի որ կրում է ԱՄՆի Մեծ կնիքը, ստորագրուած է ԱՄՆի նախագահի եւ ենթաստորագրուած է ԱՄՆի պետքարտուղարի կողմից: Հետաքրքիր է, ԱՄՆի իշխանական եւ հանրային կառոյցները երբեւէ որեւէ դիրքորոշում արտայայտե՞լ են փաստաթղթի առնչութեամբ:



ԱՐԱ ՊԱՊԵԱՆ.- Պետական արձագանգները շատ գուսպ են: Ամերիկեան որոշակի շրջանակներ ընդամենը ասում են՝ ցոյց տուէք մեզ այդ փաստաթուղթը, ծանօթանանք: Այսինքն, փաստաթղթից անտեղեակ են: 1920ի Նոյեմբերի 22ին, որոշումը կայացուելուց յետոյ, իրաւարար վճիռն ընդամենը մէկ անգամ՝ 1921ի Յունուարի 21ին է տպագրուել: Այն շրջանառութեան մէջ պետք է դնէինք մենք՝ հայերս, ինչը չի կատարուել: Այսօր նկատելի է մեծ հետաքրքրութիւն փաստաթղթի



նկատմամբ: Կան մարդիկ, ովքեր սպասում են տպագրմանը, անգամ ուղարկել են իրենց հասցեները, որ փոխանցեմ իրենց:

ԱՐՄԻՆԷ ՍԻՄՈՆԵԱՆ.- Հիմնականում ամերիկեան ո՞ր շրջանակներն են հետաքրքրուած Հայաստանի համար կարելոր այս փաստաթղթով:
ԱՐԱ ՊԱՊԵԱՆ.- Նրանք նախկին պաշտօնեաներ են, գործող դիւանագետներ, դեսպաններ: Անուններ տալ դեռ չեմ նախընտրում: Կարելորն այն է, որ այդ մարդիկ ուզում են սկզբնաղբիւրին ծանօթանալ: Առաւել հետաքրքրուած են ամերիկացի իրաւաբանները, ցաւօք, առաւել, քան հայաստանեան: Ամերիկացիները գիտակցում են, որ գործ ունեն ժամանակային սահմանափակում չունեցող իրաւական լուրջ փաստաթղթի հետ, որը կարելի է ճիշդ օգտագործել: Հայաստանում պատմաբանները, քաղաքական գործիչները հարցը մշտապէս տեղափոխում են քաղաքական դաշտ, սկսում քննարկել Թուրքիայի, Հայաստանի ուժեղ-թոյլ լինելը: Ինչը խիստ սխալ է: Երբ կը ստեղծենք իրաւական ուժեղ հիմքեր, այդ ժամանակ թուրքերն իրենց ոտքով կը գան մեզ հետ բանակցելու: Իսկ մինչ այդ մենք պէտք է վերահաստատենք մեր իրաւունքները:

ԱՐՄԻՆԷ ՍԻՄՈՆԵԱՆ.- Իրաւունքների վերահաստատումը յստակ քայլեր է ենթադրում, որո՞նք են դրանք:

ԱՐԱ ՊԱՊԵԱՆ.- Առաջին. իրաւարար վճիռը մենք պէտք է դնենք իրաւագիտական շրջանառութեան մէջ. այսինքն՝ տպագրենք ու հասցնենք միջազգային դիւանագետներին, իրաւաբաններին: Երկրորդ. պէտք է ստեղծենք իրաւական փաթեթ: Երրորդ, շատ կարելոր է փաստաթղթի վերաբերեալ մեր ձեռքի տակ անկախ փորձագիտական եզրակացութիւն ունենալը:

ԱՐՄԻՆԷ ՍԻՄՈՆԵԱՆ.- Իսկ ի՞նչ կը տայ մեզ նման եզրակացութիւնը:
ԱՐԱ ՊԱՊԵԱՆ.- Նախ այն բանակցային ցանկացած գործընթացում՝ թէ՛ թուրքերի, թէ՛ ատրպէյճանցիների դէմ, կը դառնայ կարելորագոյն լծակ մեր ձեռքում: 1920 թուականին Հայաստանի սահմանների վերաբերեալ կայացուել է յատուկ որոշում, եւ եթէ մենք բարձր մասնագիտական կարծիք ենք ստանում, որ փաստաթուղթն այսօր ուժի մէջ է, ապա այն ինքնին հիմք է դառնում որոշելու Հայաստան-Ատրպէյճան սահմանը: Մենք այն կը դնենք համանախագահների առաջ, կ'ասենք՝ շեշտադրումները փոխել է պէտք: Փաստաթղթով մենք յստակ պատասխան ենք տալիս, որ ոչ թէ, ինչպէս Ատրպէյճանն է ասում, Հայաստանն է գրաւել «ատրպէյճանական» տարածքները, այլ կատարուել է ճիշդ հակառակը: Եթէ Ատրպէյճանի իրաւական հիմքը միջազգային առումով մերժելի Կովկասեան բիւրոյի որոշումն է, ապա հայերիս ներկայացրած իրաւական հիմքը Ազգերի լիկայի համապատասխան յանձնաժողովի որոշումն է:



Յաջորդը. եթէ ունենանք առնուազն երեք յայտնի իրաւաբանների մասնագիտական եզրակացութիւնը, Թուրքիայի խօսակցութիւնը Հայաստանի հետ բոլորովին այլ «երանգներ» կը ստանայ: Եզրակացութիւնն ունենալուն պէս մենք պէտք է ՄԱԿի կառոյցներից մէկի միջոցով իրաւարար վճիռը փոխանցենք ՄԱԿի դատարան եւ սկսենք դատական գործընթացը: Եթէ այսօր օտարերկրեայ դիւանագէտները հետաքրքրուած են փաստաթղթով, դա ամենեւին պատահական չէ: ԱՄՆ-ն ու Եւրոպան այսօր չեն ուզում, որ Թուրքիայի հետ մեծ փոփոխութիւններ տեղի ունենան, բայց նաեւ հասկանում են, որ, անկախ ամէն ինչից, գործընթացը սկսուած է: Մի կողմից գնում է Թուրքիայի իսլամացումը, որը բխում է թուրքերի ներքին մղումներից. Թուրքիան վերադառնում է իր արմատներին: Միւս կողմից, քրտական գործօնը կարող է Թուրքիան պայթեցնել ներսից: Արեւմուտքն իր ներկայիս քաղաքականութեանը զուգահեռ հետաքրքրուած է եւ այս փաստաթղթով, եւ մեր խնդիրը պիտի լինի հասունացնել հարցը, որ երբ գայ մեծ յեղափոխութիւնների ժամանակը, պատրաստ լինենք, ու կարողանանք շահել, եւ ոչ թէ կորցնել: Ի դէպ, ասեմ, որ հայաստանեան իշխանական շրջանակներում եւս կայ հետաքրքրութիւն փաստաթղթի հանդէպ:

ԱՐՄԻՆԷ ՍԻՄՈՆԵԱՆ.- Ուիլսընեան վճռի նկատմամբ թերահաւատները յայտարարում են, թէ այն իրաւական ուժ չունի, քանի որ չի վաւերացրել ԱՄՆի Սենատը: Թերահաւատների շարքում, ի դէպ, ՀՀ Արտաքին գործոց նախարարն է: **ԱՐԱ ՊԱՊԵԱՆ.-** Իրաւարար վճիռը միջազգային որոշում է, որը կարիք չունի ամերիկեան Սենատի կողմից վաւերացման: Էդիկ Նալբանդեանին եւ չեմ հասկանում: Նա կրկնում է Անդրանիկ Միհրանեանի խօսքերը, իսկ վերջինս այս հարցում ոչինչ չգիտի եւ կրկնում է խորհրդային պրոպագանդան (քարոզչութիւնը-Խմբ.): Հաւանաբար, երկուսն էլ շփոթում են ժամանակագրական առումով իրար շատ մօտ, սակայն երկու տարբեր՝ Հայաստանի մանդատի եւ Հայաստանի սահմանների հարցերը: Դաշնակիցները՝ Իտալիան, Ֆրանսիան, Մեծ Բրիտանիան, Միացեալ Նահանգների առաջ դրեցին երկու հարց, որ՝ ա) ԱՄՆը ստանձնի Հայաստանի մանդատը եւ բ) որոշի Հայաստանի սահմանները:

ԱՄՆի Սենատը 1920 թ. Մայիսի 24ից Յունիսի 1ը քննութեան առնելով Հայաստանի մանդատը ստանձնելու հարցը, քուէարկութեամբ մերժեց այն: Պատճառն այն էր, որ ԱՄՆը Ազգերի լիկայի անդամ չէր: Մինչդէռ երկրորդին նախագահ Ուիլսընը 1920 թ. Մայիսի 17ին տուեց իր դրական պատասխանը: Միալ պատկերացում կայ, թէ հայ-թրքական սահմանը որոշել են հայերն ու թուրքերը: Ո՛չ: Մեծ տերութիւններն են դիմել ԱՄՆին նման որոշում կայացնելու համար: Հայաստանն ու Թուրքիան էլ տուել են իրենց համաձայնութիւնը՝ ընդունել ու ճանաչել իրաւարար վճիռը Սեւրի պայմանագրի 89րդ յօդուածի համաձայն: Իրաւարար վճիռները «վերջնական են, անբեկանելի եւ կատարման համար պարտադիր»: Բայց, ցաւօք, այն չիրականացաւ, քանի որ որոշումը մտաւ Ազգերի Լիկա այն ժամանակ, երբ շահառուն՝ Հայաստանի



Հանրապետութիւնը, 1920 թ. Դեկտեմբերի 2ին, այլեւս գոյութիւն չունէր՝ խորհրդայնացել էր: Այնպէս որ, Նալբանդեանին՝ որպէս վատ ուսանողի, կարելի է անբաւարար նշանակել:

ԱՐՄԻՆԷ ՍԻՄՈՆԵԱՆ.- Յեղասպանութեան պատճառով հայերս մեր հայրենիքի մի հսկայական մասն ենք կորցրել, այսինքն, գործ ունենք հայրենագրկման փաստի հետ, ուրեմն, Թուրքիայից մեր պահանջը ոչ թէ հողային է, այլ հայրենիքի: Ինչի մասին գրեթէ չենք խօսում:

ԱՐԱ ՊԱՊԵԱՆ.- Բոլոր ցեղասպանութիւններում, որոնց մասին այսօր խօսում է՝ Հոլոքոսթ, Գամպոտիա, Տարֆուր, բացակայում է հայրենագրկման կամ տարածքների կորստի փաստը: Միակ ցեղասպանութիւնը, որը ֆիզիքականի հետ յանգեցրել է նաեւ կենսական տարածքների կորստի, Հայոց Ցեղասպանութիւնն է: Իսկ ի՞նչ է նշանակում կենսական տարածք. այն տարածքն է, որի կորստի պատճառով հայերը յայտնուել են այնպիսի աշխարհագրական իրավիճակում, որն ուղղակի բացառում է հայութեան զարգացման հնարաւորութիւնները: Ցեղասպանութեան հետեւանքն է, որ այսօր Վրաստանի լեզուն այսքան երկար է: Կորցրել ենք ելք դէպի ծով ու մնացել վրացիների յոյսին: Իրաւարար վճռով հայերին տրուեց խոստացուած հայրենիքի 40 %ը միայն: Հաշուարկը յստակ է, ամերիկացիները փայլուն աշխատանք են արել ու ապահովել այն նուազագոյնը, որով հայը կարող էր ապրել ու զարգանալ իր հողի վրայ: Իսկ այսօր մենք ուզում ենք մարմնից կտրուած մի մասնիկով, ինչպիսին ներկայիս Հայաստանն է, գոյատեւել: Ինչպէ՞ս կարող է մարդն ապրել ինքնուրոյն, եթէ ձեռքն ու ոտքը կտրուած են: Նոյն վիճակում է այսօր Հայաստանը: Մենք մնացել ենք այս մի փոքր հողակտորի վրայ ու մեզ ներշնչում ենք, թէ կարող ենք զարգանալ: Միամտութիւն է մտածել, թէ այս դեկավարները վատն են, վաղը կը գան լաւ դեկավարներ ու ամէն ինչ լաւ կը լինի: Չի լինի: Երկրի տնտեսական վիճակի կայունացումը կախուած է առարկայական գործօններից: Եթէ չունենք ելք դէպի ծով, ոնց էլ կառավարուի երկիրը՝ առաջընթաց չի լինելու:

ԱՐՄԻՆԷ ՍԻՄՈՆԵԱՆ.- Ցեղասպանութիւնը միջազգային յանցագործութիւն է, եւ Հայոց Ցեղասպանութեան հարցը վաղ թէ ուշ պէտք է մտնի Միջազգային դատարան: Ի՞նչ հայցով պէտք է հանդէս գայ պահանջատէր հայութիւնը:

ԱՐԱ ՊԱՊԵԱՆ.- Միջազգային դատարան դիմելու համար մեր ձեռքի տակ նախ պէտք է ունենանք իրաւական փաթեթն ու փորձագիտական եզրակացութիւնը: Իսկ դատարան պէտք է մտնել մէկ հարցով՝ ուժի մէջ է Վուտրօ Ուիլսընի Նոյեմբեր 22ի իրաւարար վճիռը:

ԱՐՄԻՆԷ ՍԻՄՈՆԵԱՆ.- Բայց դրանով հարցականի տակ չե՞նք դնում փաստաթղթի իրաւական արժէքը:



ԱՐԱ ՊԱՊԵԱՆ.- Դիմել չի նշանակում կասկածի տակ դնել. մենք վստահ ենք, որ փաստաթուղթն ուժի մէջ է, եւ այդ քայլով ընդամենը վերահաստատում ենք փաստը: Տալիս ենք մէկ հարց, ստանում յստակ պատասխան: Մեզ պէտք է, որ դատարանն ասի՝ այո: Մնացածն անիմաստ խօսակցութիւններ են, որի մէջ ներքաշում են մեզ ու շեղում: ՄԱԿ-ն ունի երկու մարմին, որոնց որոշումները պարտադիր են կատարման. մէկը Անվտանգութեան խորհուրդն է, միւսը՝ Միջազգային դատարանը: Մենք պէտք է ունենանք դատարանի որոշումը, որպէսզի կարողանանք դիմել Անվտանգութեան խորհրդին եւ ասել դատարանի որոշման հիման վրայ՝ որպէս գլխաւոր ուստիկան, դու պարտաւոր ես քայլեր ձեռնարկել որոշումը կեանքի կոչելու համար: Ինչ-որ մէկը պէտք է Թուրքիային պարտադրի, այդ ինչ-որ մէկը ՄԱԿի Անվտանգութեան խորհուրդն է լինելու: Նրանք, ովքեր ասում են, թէ այսօր ժամանակը չէ, վաղը կ'ուժեղանանք, նոր միայն հարցը կը բարձրացնենք, կամ իրենք են միամիտ, կամ դիմացինին են միամիտի տեղ դնում: Մեզ համար պայքարի իրապաշտ ուղին իրաւականն է, ուր եւ կարող ենք հասնել յաղթանակի:

ԱՐՄԻՆԷ ՄԻՄՈՆԵԱՆ.- Այստեղ լուրջ գործունէութիւն պէտք է ծաւալի Հայաստանի Հանրապետութիւնը, որպէս պահանջատէր: Նախագահ Սարգսեանի ցուցմունքով վերջերս ստեղծուեց պետական յանձնաժողով, դա գործնական քայլ կարելի է համարել:

ԱՐԱ ՊԱՊԵԱՆ.- Դրա փոխարէն ճիշդ կը լինէր վարձել միջազգային իրաւունքի երեք յայտնի մասնագէտի եւ ձեռք բերել փորձագիտական եզրակացութիւնը: Եթէ պետութիւնը կարողացաւ համոզել հայ գործարարին 22 միլիոն տոլար ներդնելու Տաթևի ճոպանուղու կառուցման վրայ, որը պարապ է մնալու, որովհետեւ մարդ չկայ, նոյն հային կարող է համոզել աւելի քիչ գումարով օժանդակել ազգային կարեւորագոյն հարցերի լուծմանը: Ես ՀՀ իշխանութիւններին առաջարկում եմ՝ եկէք իրաւարար վճիռը դնենք շրջանառութեան մէջ:

Ամերիկացիները զարմանում են՝ եթէ դուք այդքան փաստաթղթեր ունէք, ինչո՞ւ էք մինչ օրս լռում: Աւելին, մեզ չեն հասկանում անգամ թուրքերը: Իրենց հետ խօսել եմ, ասել, կարող ենք պայմանաւորուել ու չբարձրացնել հողային պահանջ, ինձ պատասխանել են՝ դուք դա չէք կարող անել, որովհետեւ դա հող չէ, այլ հայրենիք է, ու քանի դեռ հայը որպէս ժողովուրդ ապրում է, չի կարող հրաժարուել իր հայրենիքից:

Թուրքն էլ է հասկանում, որ հայն իրենն է ուզում, իրենից խլուած հայրենիքը, որն իրաւականօրէն իրեն է պատկանում: Ու նաեւ ուզում է, որ աշխարհը տէր կանգնի իր իսկ նախաձեռնութեամբ եւ մասնակցութեամբ կազմուած, հաստատուած եւ օրինապէս ուժի մէջ մտած փաստաթղթին, ուզում է, որ վերականգնուի իր ոտնահարուած արդարութիւնը:

Ժամանակն է Թուրքիայից պահանջելու, որ դադարեցնի Հայաստանի Հանրապետութեան տարածքները բռնագրաւուած պահելու գործընթացը:

Յօդուածներ

Ուխտագնացութիւն Կարսի մէջ Ս. Առաքելոց եկեղեցին վերածուեր է մզկիթի Եղիշէ Չարենցի տունն ալ դարձեր է աղբանոց



«Բարի գալուստ Թուրքիայի Հանրապետութիւն»՝ վրաց-թրքական սահմանին վրայ ըսաւ երիտասարդ թուրք սահմանապահը: Արտայայտութիւնը չափազանց խորթ էր հայ զբօսաշրջիկներու մեր խումբին համար, որ աւելի քան 12 ժամ ճանապարհ կտրած էր՝ այցելելու համար ոչ թէ Թուրքիա, այլ՝ ուխտագնացութիւն կատարելու Պատմական Հայաստան:

Մեզմէ իւրաքանչիւրը, հոգւոյն խորը, կը գիտակցէր, որ հայրենիքէն հայրենիք անցնելու համար չորս սահման անցեր էր ու Հայաստանէն Հայաստան այցելելու համար անցագիր էր ձեռք բերեր, սակայն դաժան իրականութիւնը խոստովանիլը չափազանց դժուար էր:

Ինքնաշարժին մէջ լռութիւն էր: Այդ լռութիւնը կը «խաթարէր» Ֆլորա Մարտիրոսեանի «Տլէ եամանը»: Իւրաքանչիւրն այդ պահուն ինքն իրեն հետ էր, իր անցեալի, յիշողութիւններու ու նախնիներու: Լռութիւնը խախտեց ամերիկահայ Թալինը՝ բարձրաձայն ըսելով այն, ինչ որ բոլորը կը զգային:

«Միեւնոյնն է, ես ինձ Թուրքիայում չեմ զգում: Ես ինձ զգում եմ իմ հայրենիքում: Սա հայկական հող է, հայրենի բնութիւն, հող ու ջուր»: Սա կարծես ուշացած պատասխան էր թուրք սահմանապահի խօսքին: Պատասխանն այդ, ցաւօք, միայն զգացական էր: Իրականութիւնը բոլորովին այլ էր:



Առաջին քաղաքը, որ կը դիմաւորէ զքօսաշրջիկին, Կարսն է: Պատմական Հայաստանի 12 մայրաքաղաքներէն մէկը՝ Կարսը թեպէտեւ բնակեցուած է քիւրտերով եւ թուրքերով, սակայն կարելի է զգալ հազարաւոր անմեղ նահատակներու շունչն ու հոգին, որ կը սաւառնին օդին մէջ եւ կը պահանջեն արդարութիւն ու արժանի պատիժ եղեռնագործներուն:

Առաջինը, որ կը գրաւէ զքօսաշրջիկներու ուշադրութիւնը, հայկական երկյարկանի սրբատաշ քարերով կառուցուած տուններն են, որոնք բարձրայարկ, գունաւոր, ժամանակակից շէնքերուն քով կ'առանձնանան իրենց ինքնատիպութեամբ եւ ճարտարապետական լուծումներով:

Աշխարհին որպէս քաղաքակիրթ ազգ ներկայանալու համար, թուրքերը ընտրել են ամենահեշտ ճանապարհը: Կարսի փողոցներուն մէջ պահպանուած հայկական քարաշէն տունները, որոնց կարելի է հանդիպիլ նաեւ Գիւմրիի հին թաղամասին մէջ, կը ներկայացունին որպէս «թրքական ճարտարապետութեան գոհարներ» եւ ընդգրկուած են յուշարձաններու պահպանութեան ցանկին մէջ: Հայկական սեւ քարով կառուցուած գրեթէ բոլոր



շէնքերուն վրայ կը ծածանուին թրքական դրօշներ:

Հայ քրիստոնեային համար, չկայ աւելի սարսափելի տեսարան, քան երբ իր նախնեաց հողին վրայ կը տեսնէ, թէ ինչպէս հայկական եկեղեցիները կ'ամ հիմնայատակ աւերուել



են, կա՛մ վերածուեր մզկիթներու:

Կարսի Ս. Առաքելոց եկեղեցւոյ մէջ, շարականներ չեն հնչեր այսօր, պատարագ չի մատուցուիր: Գմբէթի խաչը հանուած է, խորանը՝ քանդուած, յատակին փռուած թրքական գորգերն ալ կը յուշեն որ եկեղեցին վերածուեր է մզկիթի: Եկեղեցի ստիպուած էինք մտնել իսլամական օրէնքով: Քիւրտ մոլլան ստիպեց մեզ դռան շեմին կօշիկները հանել: Ան կը գիտակցեր, որ այցելուները տարածքի տերերն են՝ հայեր, եւ իւր, բռնուող գողի հայեացքով կը նայեր: Անոր դէմքը բարկութիւն ու միաժամանակ զարմանք կ'արտայայտէր, երբ հայերը՝ գրեթէ արտասուելով, կ'աղօթէին, շարական կ'երգէին եւ կը խաչակնքէին:



Եկեղեցւոյ հարեանութեամբ կը գտնուի Կարսի բերդը: Գագաթին կը ծածանուի թրքական կարմիր դրօշը՝ աստղն ու կիսալուսինը:

Ս. Առաքելոցի հարեանութեամբ կը գտնուի Ս. Վարդանի կամուրջը: Անիկա շրջապատուած է հայկական բաղնիքներով, որոնք հրաշալիօրէն պահպանուեր են: Մօտը՝ մեծանուն բանաստեղծ Եղիշէ Չարենցի բնակարանն է: Երկյարկանի



կառոյցէն այսօր միայն պատերն են մնացեր: Տարածքը չի խնամուիր եւ վերածուած է աղբանոցի:

Կարսի կեդրոնը կը գտնուի թանգարանը: Թուրքիոյ զբօսաշրջութեան եւ մշակոյթի նախարարութեան աջակցութեամբ գործող թանգարանը կը ներկայացնէ «Թուրքիոյ անցեալը»: Այստեղ այցելուն կրնայ գտնել հայկական զարդեր, սափորներ, կարասներ, մետաղադրամներ, հայկական գորգեր ու տարագ: Թանգարանի վահանակը կը տեղեկացնէ, որ տարածքին մէջ ապրեր են ոչ միայն թուրքեր, այլեւ յոյներ, քիւրտեր, ռուսեր: Հայի գոյութեան մասին ոչինչ կայ գրուած, սակայն ցուցանմուշները հայու ներկայութեան լաւագոյն ապացոյցն են:

Թուրքերը ջնջեր են հայուն ներկայութիւնը իր սեփական երկրէն, սակայն թանգարանին մէջ, որպէս քանդակագործութեան լաւագոյն տարր, անոնք կը ներկայացնեն հայ վարպետներու կերտած Ս. Առաքելոց եկեղեցւոյ դռները՝ իրենց զարդաքանդակներով ու նախշերով:

Առաջին իսկ հայեացքով, անոնք կը գրաւեն այցելուն իրենց գեղեցկութեամբ, զարդանախշերու ինքնատպութեամբ: Թանգարանի բակին մէջ, ի թիւս բազմաթիւ այլ քանդակներու, ներկայացուած են հայկական գերեզմանաքարեր, խաչքարեր: Առաւել ուշադիրները կրնան՝ գերեզմանաքարերու վրայ, ոչ միայն հայկական խաչեր տեսնել, այլեւ հայատառ արձանագրութիւններ:

Թանգարանի բակին ետեւը պահպանուած վակոնը ճակատագրական նշանակութիւն ունի հայերու համար: Այստեղ են կնքուեր, 1921-ին, հայ ժողովուրդի ճակատագիրն ու ներկայի սահմանները:

Կարսի մէջ, հայկական որեւէ այլ հետք չգտանք: Մնացեալը մզկիթներ են, դիմագիծ չունեցող շէնքեր ու հիւրանոցներ, որոնք խորթ էին եւ որեւէ կապ չունէին հայ քրիստոնէային հետ, որ հայոց երբեմնի հօգի մայրաքաղաքին մէջ կը փնտռէր իր նախնիներու անցեալն ու պատմութիւնը: Առջեւ՝ մեզ կը սպասէր Անին... Յասմիկ Յարութիւնեան-

Ազգ

(յապաւումներով եւ արեւմտահայերէնի վերածուած)

Տերսիմի մէջ կը պատրաստուին դիմաւորել Մնձուրի փառատօնին համար ժամանող հայերուն



Թուրքիոյ Թունճէլի նահանգին մէջ (Տերսիմ), 2000 թուականէն կազմակերպուող Մնձուրի բնութեան եւ մշակոյթի փառատօնին այս տարի պիտի մասնակցին 100-է աւելի հայեր:

Պոլսոյ մէջ ստեղծուած Տերսիմի հայերու միութեան նախագահ Միհրան Փրկիչ Կիւլթէքինի նախաձեռնութեամբ՝ Տերսիմի մէջ իրականացուելիք Մնձուրի բնութեան եւ մշակոյթի փառատօնին պիտի մասնակցին աշխարհով մէկ ցրուած տերսիմցի հայեր: Կը սպասուի որ փառատօնին մասնակցին 100-է աւելի հայեր աշխարհի տարբեր երկիրներէ, ներառեալ Հայաստանէն:

Յուլիսի վերջաւորութեան տեղի ունենալիք փառատօնին մասնակից հայ հիւրերու կեցութեան համար՝ արդէն սկսեր են նախապատրաստութիւնները: Հայ հիւրերու համար նախատեսուած են այցելութիւններ հայկական եկեղեցիներ եւ պատմական այլ վայրեր:

Տերսիմցի հայերու միութեան նախագահ Միհրան Փրկիչ Կիւլթէքինը նշեր է, թէ իրենք կը ցանկան, որ այս փառատօնը նուիրուած ըլլայ Հրանդ Տինքին: «Մենք 100 հիւր միայն Հայաստանէն ունենալու ենք, չհաշուած այլ երկիրներէ ժամանող հայերը: Ես կը ցանկամ յառաջ երթալ եւ ըսել, որ Տերսիմն ու Երեւանը պէտք է եղբայր քաղաքներ դառնան», - ըսեր է Միհրան Փրկիչ Կիւլթէքինը:

Նշենք, որ Տերսիմը կազմեր է Հայոց պատմական Ծոփք նահանգի մէկ մասը: Տերսիմը Թուրքիոյ հանրապետութեան ստեղծումէն ետք վերանուանուեր է Թունճէլի: Տերսիմի մէջ կ'ապրին հիմնականօրէն քրդըլպաշ ալեւիներ, որոնց կրօնի եւ աւանդոյթներու մէջ կան նաեւ հայկական եւ քրիստոնէական տարրեր:

Տերսիմի մէջ, Մնձուր լեռը եւ համանուն գետը մեծ կարեւորութիւն ունին տերսիմցիներու համար:

1915-ի Հայոց ցեղասպանութենէն փրկուած շատ մը հայեր պատասպարուեր են

Տերսիմի մէջ: Իսկ արդէն 1937-1938 թուականներուն՝ թրքական իշխանութիւնները կոտորած սկսած են Տերսիմի մէջ՝ ամբողջական գիւղեր ջնջելով երկրի երեսէն: Տարբեր տուեալներով՝ կոտորուէր են մինչեւ 100,000 տերսիմցիներ: Նշենք նաեւ որ Յունիս 12-ի խորհրդարանական ընտրութիւններուն, Էրտողանի ղեկավարած «Արդարութիւն եւ զարգացում» կուսակցութիւնը Տերսիմի մէջ ջախջախիչ պարտութիւն կրած է՝ չկարողանալով այնտեղէն հանել նոյնիսկ մէկ պատգամաւոր:

Աղբիւր՝ news.am

75,000 գրականութեան կորուստը արդեօ՞ք չի մտահոգեր կառավարութիւնը



Facebook-ն ու ընկերային այլ ցանցերը դեռ չեն ներխուժեր Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքը, եւ այդ իսկ պատճառով՝ գիրքի նկատմամբ սերն ու պահանջարկը այստեղ մեծ են: Մարտունեցիները կոխ կ'ընեն նոր գիրք ունենալու, հինը պահելու համար, իսկ անոնց պահանջքին ականջալուր չեն երբեք՝ ոչ կառավարութիւնը, ոչ ալ տարբեր հիմնադրամները:

Քաղաքի կեդրոնական գրադարանի անմխիթար վիճակին մասին «Հետք»ը անդրադարձեր էր դեռ 2 տարի առաջ: Այդ ժամանակ քաղաքային իշխանութիւնները խոստացան, թէ գրադարանը պիտի վերանորոգուի 2010 թուականին, քանի որ համաշխարհային տնտեսական ճգնաժամը խառներ էր կառավարութեան ծրագիրները, եւ հնարաւոր չէր անկէ առաջ գումար յատկացնել վերանորոգման համար: 2010 թուականը արդէն պատմութիւն է, իսկ գրադարանի 75,000 կտոր գրականութիւնը դեռ կը դիմադրէ անձրեւին եւ խոնաւութեան:

Մարտունիի կեդրոնական գրադարանի տնօրէն Լիտա Ալեքսանեանը «Հետք»ի հետ զրոյցի ընթացքին ըսաւ, որ անդադար տեղացող անձրեւներէն ետք, գիրքերու



վրայ բորբոս ու սունկեր աճեր են խոնաւութենէն: Տնօրէնը կ'ահագանգէ, որ մի քանի տարի յետոյ, այլեւս հնարաւոր պիտի չըլլայ օգտուիլ այդ գիրքերէն, եւ քանի դեռ ուշ չէ, պէտք է փրկել գրականութիւնը:

Գրադարանի տարածքին կը գործեն երեք հիմնական դպրոց, եւ աշակերտները կ'օգտուին կեդրոնական գրադարանէն: 2010 թուականին, գրադարանը ունեցած է 2514 կայուն ընթերցող:

Տնօրէնը կը փաստէ, որ ռիսկ չըներ բանալու գրապահոցի դուռը, քանի որ խոնաւութեան հոտն անտանելի է: Զինք կը մտահոգէ նաեւ երկար տարիներով գրադարանի մէջ աշխատողներու առողջութիւնը, քանի որ անոնք ալ կը շնչեն այդ խոնաւ օդը եւ կը նստին թաց պատերէն ներս: «Հենց հիմա նստած դողում ենք: Դրսում ցուրտ է, անձրեւ է գալիս, բայց մենք դուռ ու պատուհան ենք բացում, որ միջանցիկ քամի լինի, գրքերը մի քիչ չորանան», - կը նշէ տնօրէնը: Իր խօսքերով՝ նոյնիսկ այս պայմաններու տակ, գրադարանը մէկ օր չէ փակուեր: Կապ կը պահպանեն Ազգային գրադարանի հետ եւ համատեղ միջոցառումներ կ'իրականացնեն:

Լիտա Ալեքսանեանը կ'ըսէ, որ գիրքերուն մեծ մասը ենթակայ է դուրս գրուելու, քանի որ բազմիցս վերանորոգուեր է եւ ա՛լ հնարաւոր չէ կարգի բերել զայն: Սակայն, վերջին երկու տարուայ ընթացքին, ոչ մէկ գիրք դուրս գրուած է: Հիմնական պատճառը գիրքի պահանջարկն է: Ատկէ զատ, վերջին 7-8 տարիներուն, գրադարանը շատ քիչ գիրք է ստացած, եւ եթէ եղածներն ալ դուրս գրուին, ապա չեն կարողանար ընթերցողի կարիքները բաւարարել:



Տնօրէնը հաշուեր է որ ամսական մօտ 100 գիրք կը ստանձուին ու կը վերանորոգուին:

Տնօրէնը հիասթափուած է որ կառավարութիւնը չի կատարեր իր իսկ խոստումը:



Առ այսօր, ո՛չ գրադարաններու մասին օրէնք է ընդունուած, ո՛չ կը վերանորոգուին անոնք, ո՛չ ալ՝ կը լրանան նոր գրականութեամբ:

«Այս տարի մարգալետարանի միջնորդութեամբ քաղաքապետարանը ցանկանում է վերանորոգման աշխատանքներ կատարել մեր գրադարանում, բայց մինչեւ հիմա դեռ աշխատանքները չեն սկսել: Մեզ ասել են, որ պատուհանները փոխելու համար գումար չկայ, եւ 3 միլիոն դրամ են նախատեսել յատակը կարգի բերելու եւ ձեւական վերանորոգում անելու համար: Շատ գումար է պէտք, գիտենք, որ քաղաքապետարանն այդքան գումար չունի հիմնական վերանորոգում անելու համար», նշեց գրադարանի տնօրէնը:

Լիտա Ալեքսանեանը խնդրանքով կը դիմէ Հայաստանի եւ արտերկրի մէջ ապրող բարերարներուն, որ ֆինանսական օգնութիւն յատկացնեն 75,000 կտոր գրականութիւնը փրկելու համար: «Քանի որ գրադարանը քաղաքապետարանի ենթակայութեան տակ է, մշակոյթի նախարարութիւնը ձեռքերը լուացել, մի կողմ է քաշուել, ոչ մի հարցով չի աջակցում: Ես էլ ստիպուած եմ բարերարներին խնդրել», - ասելացուց Լ. Ալեքսանեանը:

Ադրիւր՝ ՀԵՏՔ

Մինչեւ 2016 թուականը Տաթևի վանական համալիրը ամբողջովին նորոգուելու է



Բարձրաբերձ ժայռերու հրուանդանին վրայ կառուցուած Տաթևի վանական համալիրին մէջ, կեանքը աշխուժացեր է: Վանքի վանահայր Միքայէլ աբեղայ Գեորգեանը կ'ըսէ թէ այդ ամէնը ճոպանուղիի շնորհիւ է: Մեծ թիւ կը կազմեն զբօսաշրջիկները, որոնք կու գան, կը շրջին, կը դիտեն, կը լուսանկարուին ու կը լուսանկարեն հնամենի վանական համալիրի ամէն մէկ շինութիւնը, կը հիանան Որոտանի կիրճով, կը զարմանան մեր նախնիներու ստեղծագործ մտքի վրայ եւ մի փոքր յուշանուէր գնելով՝ կը հեռանան Տաթևէն:

Տաթևի վանքի զարգացումը սկսեր է 9-րդ դարու կեսէն, երբ անիկա վերածուեր է Սիւնեաց եպիսկոպոսական կեդրոնի, իսկ որպէս հիմնադրման տարեթիւ կը նշուի 848 թուականը:

Վանքը նշանակալի դեր կատարած է երկրի մշակութային զարգացման գործին մէջ, այստեղ կեդրոնացուած եղած են հազարաւոր արժէքաւոր ձեռագիրներ, վանքապատկան եւ իշխանական բազմաթիւ վաւերագիրներ: Տաճարի կառուցումը սկսեր է 895-ին եւ աւարտեր է 13 տարի անց՝ 908-ին:

Նոր տաճարի կառուցումէն ետք, վանքին մէջ իրարու ետեւէ սկսեր են կառուցել նաեւ սեղանատուն, գրատուն, դամբարան, զանազան արհեստանոցներ, պահեստներ եւ շատ ու շատ օժանդակ եւ օգտակար կառոյցներ, որոնք պէտք է օգնէին վանքին՝ որպէս վանական համալիր հանդէս գալուն եւ բարգաւաճելուն:

11-րդ դարուն, սելճուքները ասպատակեր են վանքը, սակայն շատ չանցած՝ անիկա վերականգնուեր է, վերակառուցուեր է Ս. Գրիգոր եկեղեցին, որ, սակայն, հիմնայատակ կործանուեր է 1138-ի երկրաշարժի ժամանակ: Ս. Գրիգոր տաճարը կիսակործան մնացեր է աւելի քան մէկ դար, եւ միայն 1274-ին, Հայրապետ եպիսկոպոսի ժամանակ, վերաշինուեր են գմբէթն ու եկեղեցին: Տաճարը այս վիճակով մնացեր է մինչեւ 1931 թուականը, երբ նոր երկրաշարժ մը կրկին աւերեր է զայն:

Այս երկու վերջին տարիներու աննախադէպ աշխուժացումը ապահովեր են բարենորոգ ճանապարհներն ու օդային ճանապարհի կառուցումը: «Տաթևը գործող եկեղեցի է համարուել 1988-ից, բայց մշտական քահանայ չենք ունեցել: Երբ

մկրտութեան կամ հարսանիքի հարց է լինում, Գորիսից էր քահանան գալիս, իսկ հիմա ամէն ինչ կարգաւորուել է, մենք մեր քահանան ունենք, վանքը սկսել են վերանորոգել, ճոպանուղին էլ ինչկառուցել են, քառակի անգամ մարդկանց հոսքն աւելացել է», -գոհունակութեամբ կը յայտնէ վանքի մոմավաճառը:

«Մարդիկ գալիս են ճոպանուղու համար, նաեւ վանք են այցելում», -կը խոստովանի հայր սուրբը: Յարակից գիւղերու բնակիչներէն շատերը այս առիթով նոյնպէս անկեղծացեր են. 40-50 տարի ապրելով Տաթևի հարեւանութեամբ՝ վանքը տեսեր են միայն ճոպանուղիի կառուցումէն ետք: «Սա նշանակում է, որ սիւնեցին հեռու՝ է հաւատքից», -կը հարցնէ վանահայրը:

«Գիտէ՞ք, միանշանակ պատասխանել այդ հարցին ես չեմ կարող, որովհետեւ Աստուած է սրտեր քննողը, ոչ մէկս չենք կարող ասել, ես մէկը քրիստոնէայ է, ես մէկը քրիստոնէայ չի: Մենք սրտի խորքերը չենք կարող քննել, սա մէկ: Ամէն տարածաշրջան էլ իր բարի եւ վատ կողմերը ունի: Յայտնի է, որ շիրակցին աւելի հաւատասեր է, աւելի եկեղեցուն մօտ է, բայց սիւնեցիներն էլ



որոշակի իրենց բարի կողմերը ունեն, իրենց անդրդուելիութիւնը, իրենց անսասանութիւնը, երբեմն հնազանդութիւնը, որ արտայայտւում է հոգեւորականի նկատմամբ, բայց, ի հարկէ, եկեղեցամօտ չեն: Նոյն տաթեւցին, որ հարեւանութեամբ է ապրում, էլի ուշ-ուշ է գալիս եկեղեցի»:

Տաթևի վանահայրն արդէն 3 տարի է՝ կ'ապրի վանքին մէջ: «Պիտի վանքերում անպայման աղօթք հնչի», -կ'ըսէ Միքայէլ աբեղան, - «սա շատ կարեւոր երեւոյթ է: Մի գերմանացի կին, որ էստեղ էր եկել, ինձ մոմեր տուեց եւ խնդրեց վառել՝ ասելով, որ ինքը Գերմանիա վերադառնալով պիտի մշտապէս ապրի այն մտքով, որ հեռաւոր Հայաստանում, Տաթևի վանքում մի լոյս է վառւում: Այսինքն՝ լոյսը աղօթքի միջոցով այստեղ մշտապէս կայ, անգամ եթէ աշխարհում խաւար լինի, այստեղ լոյս միշտ կայ, ու այդ լոյսի խորհուրդը շատ կարեւոր է»:




Տաթևի վանքին մէջ, մկրտութեան եւ պսակադրութեան արարողութիւններ կը կատարուին: Պատարագներուն եւ ժամերգութիւններուն, ցաւօք, հատուկենտ հաւատացեալներ կը մասնակցին: Հայաստանի տարբեր անկիւններէն մկրտուելու կամ ուխտի պատրուակով վանք կը հասնին Տաթև անունը կրող գեղեցիկ սեռի ներկայացուցիչներ:

«Տաթևիկցիներն այստեղով անպայման անցնում են՝ լինի դա պարզ այցելութիւն, մկրտութիւն, թէ ուխտ», - կ'ըսէ հայր սուրբը:

Մինչեւ 2016-ը վանական համալիրը ամբողջովին նորոգուելու է: Այդ տարի նշուելու է վանքի ամենամեծ կառոյցի՝ սուրբ Պօղոս-Պետրոս եկեղեցիի 1110-ամեակը: Առաքելոց կամ Կաթողիկէ անունով յայտնի եկեղեցին, որ նաեւ կը կոչուի Պօղոս-Պետրոս, նուիրուած է երկու առաքեալներուն: Վանքը, հաւանաբար, կառուցուեր է այն նոյն տեղը, ուր կառուցուած է եղած հին եկեղեցին, եւ ենթադրելի է, որ անունն ալ փոխանցուեր է հինէն: Եկեղեցին ունի պազիլիք յատակագիծ՝ կեդրոնական զմբէթով, որ կը յենի երկու գլխաւոր սիւներու վրայ: Աղբիւր՝ ՀԵՏՔ

Գրական-Մշակութային

Ճաշակ մը՝ Ժանօ Իփճեանի Բանաստեղծութենէն....



Ինձի համար գեղեցիկ յայտնութիւն մը եւ ուրախացնող անակնկալ եղաւ, երբ օր մը, պատահականօրէն, Facebook-ի պաստառին վրայ երեւցաւ՝ ատենին կիպրաբնակ, այժմ լոնտոնաբնակ, Մելգոնեանցի Ժանօ Իփճեանի քերթուածներու փունջը, հերթական յաջորդականութեամբ: Քերթուածներ՝ որոնք անմիջապէս յուզեցին զիս՝ իրենց բաբախուն զգացումներու խոր արտայայտչականութեամբ, նուրբ քնարականութեամբ, պատկերներու հարազատութեամբ եւ տողերու մեղեդայնութեամբ....

Գիտէի, որ կիպրահայ ամսագիր՝ «Արձագանգ»-ի էջերուն մէջ, Ժանօ Իփճեան մշտական ներկայութիւն էր իր ստորագրած յօդուածներով եւ խմբագրական աշխատանքներով: Բայց, կարդալով իր սրտագրաւ քերթուածները, ես անկեղծօրէն կը խորհիմ որ Ժանոյի բուն տարերքը բանաստեղծութիւնն է: Հոն՝ այդ մոգական տողերուն ու բառերուն մէջ է, որ ան այնքան անմիջական հարազատութեամբ կ'արտայայտէ իր սրտի տրոփիւնը, իր վարար եւ վարարող ապրումները....

Հոգեկան հարուստ ներաշխարհով օժտուած եւ նուրբ զգացումներու տէր է Ժանօ Իփճեան, որ զիտէ նոր կեանք ու շունչ պարգեւել՝ մեր Մեծասքանչ, հազարազանձ լեզուի բառերուն՝ անոնց հաղորդելով իր արեան գուր, յոյզի թրթիռը, երեւակայութեան թռիչքը....

Ճաշակ մը փոխանցելու համար ընթերցողին, ստորեւ կը ներկայացնենք Ժանոյի բանաստեղծութեան ծաղկեփունջէն մի քանին միայն, խոստանալով աւելի լայնօրէն անդրադառնալ անոր մեր յետագայ թիւերուն մէջ.-



Մահարա

Միրտս այսօր կը նմանի
Անապատին Մահարայի
Որ ատենին դաշտ էր բերրի
Դալարագեղ ու կենդանի:

Չկայ անտառ անձիր, անձայր
Չկան ծառեր մշտադալար
Չկան կանաչ անդաստաններ
Ոչ ալ գետեր կենսանուէր:

Թռչուն, միջատ ու կենդանի
Հեռացեր են անդառնալի,
Կարիճներն են հիմա միայն
Այնտեղ շիներ բոյն ու ոստայն:

Ու ես կառչած այդ մի քանի
Ոստաններուն դեռ կենդանի
Յուշերուս հետ հոգեպարար
Կը պայքարիմ՝ սիրով անմար:

Այցելութիւն

Երէկ առաւօտ գերեզման գացի,
Փունջ մը ծաղիկներ հետս ունէի,
Նման այն վայրի պարզ ծաղիկներուն՝
Քեզի կու տայի ամէն անգամուն:

Ու դեգերեցայ գերեզմանին մեծ,
Անվերջանալի անցքերուն մէջ,
Շարան ու շարան դամբաններ տեսայ
Ոմանք հոյակապ, ուրիշներ՝ աղքատ:

Ինչքան տառապանք, ինչքան փոյթ ու սէր,
Կը ճառագայթեն այդ քար կտորներ,
Որ իրենց ներքեւ յաւէտ են պահեր
Միրուած հոգիներ, անկատար յոյսեր:

Յոգնած՝ վերջապէս, մարմնով ու հոգով,
Կը հեռանայի տառապանքէն ծով,
Երբ տեսայ յանկարծ իմ ճամբուս վրան
Գերեզման մ'անշուք եւ աղջկական:



Այնտեղ թաղուած էր քսան տարեկան
Աղջնակ մ'անտէր ու անտիրական...
Կանգնեցայ լուռ ու աղօթք մ'ըսի,
Քու ծաղիկներդ իրեն ձգեցի:

Եռաբլուր

Ինչքան ցաւ կայ հոն՝ օդիդ մէջ,
Ինկածներու յուշն անշէջ,
Ինչքան արցունք հողդ ծծեց
Ինչքան կսկիծ հողդ ծածկեց:

Գերեզմաններ շարան-շարան
Ծածկած ունին մէկուն տղան
Անդարձ կորած հայրը միւսին
Կամ սիրահարն ու ամուսին:

Ազատութեան ու պայքարի,
Հերոսները անկրկնելի՝
Ու անմոռաց որդիքը մեր
Կարմիր սրտիդ ենք յանձներ:

Շիրիմներդ քու քարաշէն,
Յարալէզներ կարծես որ են,
Լուռ կը սպասեն ահագանգին՝
Հայրենիքի կանչին կրկին:

Սրբատեղի դուն սրբազան
Հերոսներու վերջին օրրան,
Հպարտութեան, ցաւի՝ մատուռ՝
Անմահներու Եռաբլուր:

Դրօշ Հայկական

Երկինքէն իջած զանգակներ երկու,
Կոփուած Աստծոյ կամքով ահարկու
Առանց երկնաձիգ զանգակատունի
Երկինքին ներքոյ ու անջրպետի:

Ան է դրած հոն՝ խղճին վրայ մեր,
Մեր նախնիներուն, զոհերուն անմեղ
Որպէս գերեզման ու տապանաքար,
Սուրբ խնկամա ն ու օրհնուած նշխար:



Կը մնան անոնք սահմանէն անդին,
Կը սպասեն հպարտ՝ ետ դարձի օրին,
Աշխարհը ամբողջ գիտէ անկասկած՝
Թէ մերն են անոնք, մեզմէ զաւթուած:

Ու գիտէ նաեւ՝ հայը մարդասէր,
Հայը համբերող, հայը տնատէր,
Գիտէ եւ զարնել հարուածով հուժկու,
Ըլլալ անխնայ եւ վրիժառու...

Համբերեցէք դուք, երկու Մասիսներ,
Քանզի անպայման ու կասկածէ վեր՝
Օրը պիտ' հասնի, օրն ազատութեան
Ձեր ճակտին ծփայ՝ Դրօշ Հայկական:
Հոնտոն-2010

Հիմա նիւթական տեսակէտէն արուեստի ժամանակաշրջան չէ



«Ստեղծագործական աշխատանքին մղում է հենց ներքին մղումը, փնտռումը, երբ ի սկզբանէ ընտրում ես քո ուղղութիւնը: Շատ պակասութիւններ կարող ես տանել, ծանր օրեր՝ յանուն քո նպատակի: Բայց եթէ աստուածային կայծը կայ, պէտք է նպաստես, որ այն բռնկուի, բոց ու ջերմութիւն տայ մարդկանց, եւ դու դա չինայես»,- կ'ըսէ Զաւէն Պետրոսեանը:

Ան նկարիչ եւ բանաստեղծ է, ստեղծագործել սկսեւ է դեռ դպրոցական տարիներէն: 6-րդ դասարանին՝ «Պիոներ կանչ»ի մէջ տպագրուել է իր առաջին նկարը, իսկ երեք տարի անց, նոյն թերթին մէջ՝ նաեւ բանաստեղծութիւնը:

Զաւէն Պետրոսեանը կ'ապրի եւ կը ստեղծագործէ Նոյեմբերեանի շրջանի Զուջեւան գիւղին մէջ: Ան գիւղի դպրոցին մէջ նաեւ կը դասաւանդէ կերպարուեստ,



գծագրութիւն եւ Հայ եկեղեցւոյ պատմութիւն: Երկար տարիներ զբաղեր է նաեւ լրագրութեամբ: Բայց քանի որ իր արուեստէն առանձնապէս եկամուտներ չստանար, իսկ դպրոցէն ստացած աշխատավարձը չի բաւարարեր, արուեստագէտը նաեւ կը զբաղի գիւղատնտեսութեամբ եւ անասուններ կը պահէ:

Յաճախ անասունները դաշտերը տանելով, ան առիթէն կ'օգտուի եւ կը նկարէ հայրենի բնութիւնը: Առօրեայ զբաղուածութեան ու հոգերու պատճառով, չի կրնար ան որեւէ պահին զբաղիլ իր արուեստով եւ իր ուզածին չափ ժամանակ յատկացնել անոր:

«Եթէ հացի մասին հարցականով ես մտածում, նշանակում է՝ դու կարիքի մէջ ես: Եթէ կարիքի մէջ ես, ուրեմն թելերդ լիարժէք չեն բացում, քեզ չես գգում ազատ, որը արուեստի ամենաբարձր յատկանիշներից մէկն է, - կ'ըսէ Զաւէն Պետրոսեանը: - Եթէ արուեստագէտը ազատ չեղաւ, նրա արուեստի մէջ այդ մեծ ազատութիւնը դժուար կ'արտայայտուի: Իսկ մեծ ազատութիւն մեծ գործերի համար պէտք է: Եթէ արծիւը չկարողանայ թելերը բացել, նա չի կարող սաւառնել»:

Ուղեւճարն արուեստի

Չափազանց թանկ դուրս եկաւ,

Այն, ինչ թուում էր հեշտին,

Մեծ տառապանք դուրս եկաւ:

Ըստ արուեստագէտին, գրականութիւնն ու նկարչութիւնը իրար չեն խանգարեր, եւ ան անոնց միջեւ տարբերութիւն չի դնէր: Անոնք կը ներթափանցեն իրարու մէջ, կը լրացնեն եւ կ'օգնեն իրար, եւ մէկ ներշնչանքէն կը ծնի միւսը: Սակայն նիւթական պակասի պատճառով, ան այժմ աւելի շատ ժամանակ կը յատկացնէ բանաստեղծութիւններուն, որոնց համար թուղթն ու մատիտն ալ բաւարար են: Իսկ խոշոր, որակեալ նկարի համար, անհրաժեշտ են կտաւ, ներկեր եւ այլն, չնայած Զաւէն Պետրոսեանին համար՝ այդ թուղթն ու մատիտն ալ բաւական են, եթէ ան ուզէ նկարել: Ան կը նկարէ ձեռքն ինկած թղթի վրայ եւ նկարները կը պահէ իր արուեստանոցի առանձին արխիւին մէջ, ուր ունի տարբեր տարիներու բազմաթիւ նկարներ:

«Ինձ աւելի հոգեհարազատ է մեր այս հայրենի բնութիւնը: Ընդհանրապէս, գեղեցիկի գաղափարը շատ կարեւոր է, թէ՛ բանաստեղծութեան, թէ՛ նկարչութեան մէջ, որը կարող ես արտայայտել թէ՛ բնութեան, թէ՛ մի գեղեցիկ աղջկայ, թէ՛ սիրոյ ձեւով»- կ'ըսէ Զ. Պետրոսեանը:

Արուեստագէտի թեմատիկան բազմաբնոյթ է. ան սահմանափակումներ չի դնէր: Իսկ ինչ կը վերաբերի ներշնչանքին, ապա ան երբեք չի վերջանար: *«Կռուկ-դաւուկ, պակաս-պռատով ստեղծում եմ: Այլ կերպ չեմ էլ պատկերացնում իմ գոյութիւնը: Իմ ամբողջ կեանքը ստեղծագործութիւն է, ու այդպէս էլ պէտք է շարունակուի մինչեւ վերջ: Խոչընդոտներ կան, բայց ես անցնում եմ»- կ'ըսէ ան:*

Ես էլ թուում է, մահ չունեմ իրօք,

Դաշն ու միասին այս բնութեան հետ,

Ծաղիկ ու ծառի անթառամ սիրով,

Հովիի համբոյրով, երգերով իմ խենթ:

Իր երեք որդիները, որոնցմէ ոչ մէկը ընտրեր է հօր ուղին, կ'ըսեն երբեմն, թէ ի՞նչ իմաստ ունի այդքան ստեղծագործելը նման պայմաններու մէջ, բայց



արուեստագէտը չընդունիր ասիկա: Միւս կողմէ ալ, սակայն, ըստ իրեն, առկայ դժուարութիւնները տեսնելու պատճառով է, գուցէ, որ տղաները նման կերպ կը մտածեն: Իսկ գիւղին մէջ ապրելով՝ դժուար է նկարներու վաճառքը կազմակերպել, գիրքերն ալ դժուարութեամբ կը տպագրէ:

«Հիմա նիւթական տեսակէտէ արուեստի ժամանակաշրջան չէ: Եթէ լաւ ստեղծագործութիւն էլ ունենաս, չես կարող թանկ վաճառել: Շատերը արտասահմանում են վաճառում, բայց դա էլ իր դժուարութիւններն ունի»:

Զաւէն Պետրոսեանը ունի 4 հրատարակուած գիրք, շուտով լոյս կը տեսնէ նաեւ մանկական բանաստեղծութիւններու ժողովածուն: Այժմ ան կը կազմէ իր յաջորդ գիրքը: Ան նաեւ բազմաթիւ գիրքերու կրաֆիկական ձեւաւորումներու հեղինակ է:

Զաւէն Պետրոսեանի խօսքով՝ հիմա միայն ինք չէ, որ դժուարութիւններ ունի, այլ իւրաքանչիւր արուեստագէտ: Ան համոզուած է, որ կու գան ժամանակներ, երբ կը վերականգնին նախկին չափանիշները: Սակայն ատոր համար, պէտք է, նախ եւ առաջ, պետական մակարդակով ճիշդ վերաբերմունք, ոչ թէ ձեւականութիւններ, որոնք կ'ըլլան միայն ներկայ վիճակը արդարացնելու համար:

«Ուզում եմ արուեստի մակարդակի բարձրացում լինի, վերաբերմունքը ճիշդ լինի իսկական արուեստի նկատմամբ, իսկական, մաքուր արուեստը չորրորդ վարագոյրի վետեւ, ու բեմը չտրամադրուի էժան արուեստին, որը հիմա լիքն է: Իսկ հիմա ամէն ինչ վերածուել է show-ի: Մարդու կեանքն էլ է դարձել show»:

Այս երկիրը

Ինչքան էլ ինքն իր հետ գծուում է՝

Ժամանակն ամէն ինչ ճշդում է:

Ինչպէս էլ հաշուարկում, հաշում է՝

Համբերում նորից ու հաշուում է:

Ինքն իր հետ պայքարում ու կռում՝

Այդպէս է բուժում ու մաքրում:

Եւ այսպէս յաւիտեան ու անվերջ

Ինքն իր հետ, ինքն իր մէջ, ինքնավէճ:

Բանաստեղծութիւնները վերցուած են Զաւէն Պետրոսեանի չորրորդ՝ «Անհանգիստ անդորրութիւն» ժողովածուէն:

Աղբիւր՝ ՀԵՏՔ

Կայացաւ Արմէն Դարեանի «Նամականի» Գիրքի Շնորհահանդէսը



Յունիս 21-ին, Խնկո-Ապոր ազգային-մանկական գրադարանին մէջ, կայացաւ սփիւռքահայ գրականութեան եւ ընդհանրապէս՝ հայ գրականութեան նորագոյն շրջանի ականաւոր դէմքերէն մէկուն՝ Արմէն Դարեանի «Նամականի» գիրքի շնորհահանդէսը, կազմակերպուած Չարենցի անուան գրականութեան եւ արուեստի թանգարանի հետ: Գիրքին մէջ զետեղուած են սփիւռքահայ անուանի գրող, թարգմանիչ, խմբագիր Արմէն Դարեանի ուղարկած եւ ստացած նամակներու ընտրանին, որ հրատարակեր է գրականութեան եւ արուեստի թանգարանը, խմբագրութեամբ գրականագէտ Հենրիկ Բախչինեանի: 1995-ին, գրողի այրին՝ Արսինէ Դարեանը թանգարանին յանձներ է ամուսնոյն արխիւը (230նիւթ), որու հիման վրայ թանգարանին մէջ բացուեր է Արմէն Դարեանի ֆոնտը: Իսկ 2009-ին կրկին թանգարանի ֆոնտը հարստացաւ գրողի այրիին կողմէ յանձնուած, իր ամուսնոյն 400-է աւելի նամակներով:

Միջոցառումը հետաքրքրական նկարագրականով բացաւ ու վարեց օրուայ բանախօս, գրադարանի փոխտնօրէն Մատլէն Յովսէփեանը, նշելով. «Արմէն Դարեանը, նոյն ինքն Ալֆոնս Ադդարեան, իրաւամբ համարուում է սփիւռքահայ գրականութեան նորագոյն շրջանի ականաւոր դէմքերէն մէկը, տաղանդաւոր բանաստեղծ Գառնիկ Ադդարեանի, նոյնքան տաղանդաւոր արձակագրի եղբայրն է: Նրա հեղինակած երկերը՝ «Մեր հացը», «Կարօտ եւ կեանք», «Խարիսխէն հեռու», «Խարիսխին մօտ» «Լեռը եւ տունը», «Երկու եղանակ», «Նախագահին կօշիկները» լոյս են տեսել Պէյրութում եւ Երեւանում»:

Միջոցառման ընթացքին, կարդացուեցան Արմէն Դարեանի նամակներէն, որոնք

ուղղուած էին մեր ժամանակի անուանի մտաւորականներուն: Յունիսի 21-ին՝ Արմէն եւ Արսինէ Դարեաններու ծննդեան օրը, նման շնորհահանդէս կազմակերպելը իւրօրինակ նուէր ու երախտագիտութիւն է՝ հայրենասուէր ու հայրենասէր ամուսիններուն: Տիկ. Արսինէն շնորհակալութիւն յայտնեց բացառիկ երեկոյի, գիրքի հրատարակման ու նաեւ՝ ճիշդ այդ օրը Հայաստանի մէջ շնորհահանդէսը կազմակերպելու համար, որուն մասին տարիներ առաջ երազեր էր ամուսինը: Նշենք, որ յաջորդ տարի կը լրանայ անուանի գրողի ծննդեան 90-ամեակը եւ այդ առիթով ընթերցողներու դատին կը յանձնուի Արմէն Դարեանի նոր հատընտիրը:

«Ազգ» (արեւմտահայերէնի վերածուած)

Հայաստանը ներկայացնող Նարեկ Հախնազարեանը՝ Չայկովսկիի անուան մրցոյթի յաղթող



Չայկովսկիի անուան միջազգային երաժշտական մրցոյթին, որ կայացեր է Յունիս 30-ին, «Թաւջութակ» անուանակարգին մէջ յաղթեր է՝ Հայաստանը ներկայացնող անուանի երաժիշտ Նարեկ Հախնազարեանը:

Այդ անուանակարգին մէջ, եզրափակիչ փուլ անցեր էին 5 երկիրներու՝ Իտալիոյ, Պելառուսի, Ֆրանսայի ու Հայաստանի ներկայացուցիչները: Երկրորդ եւ երրորդ տեղերը գրաւած էին համապատասխանաբար Ֆրանսայի եւ Պելառուսի ներկայացուցիչները, իսկ առաջին տեղը գրաւած մեր հայրենակիցը, որպէս մրցանակ պիտի ստանայ 20 հազար եւրօ:

Tert.am



ԹԱԼԱՆՈՒԱԾ ՁԵՌԱԳԻՐՆԵՐ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՍԲ ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ՎԱՆՔԷՆ

Ըստ «ԱԶԳ» թերթին հասած տեղեկություններուն, Յունիսի 12-ին, երկու հայ անձնաւորություններ՝ Լոնտոնի էջ, Պատարագի աւարտին, մօտեցեր են Ներսէս աւագ քինյ. Ներսէսեանին՝ իր կարծիքը իմանալու համար 5 հայկական մանրանկարներու եւ երկու իւղանկարներու վերաբերեալ: Ջիրենք կը հետաքրքրէր այդ պատկերներու նիւթական արժէքը, զանոնք վաճառքի դնելու պարագային: Տէր Ներսէսը կը ճանչնայ պատկերներու պատկանելիութիւնը, որպէս մասունքներ Նոր Զուղայի Սբ Ամենափրկիչ վանքին, եւ կը բացատրէ երկու անձերուն անոնց գողցուած ըլլալը: Նկարներու պատկերները տպուած են վանքի տպագրուած ձեռագիրներու ցուցակին մէջ, եւ նկարներու տակը տեղադրուած արձանագրութիւնները պարսկերէն գրութեամբ կու տան պատկերներու նկարագրութիւնը:


Տ. Ներսէսը նկարներուն մասին անմիջապէս կը տեղեկացնէ Անթիլիաս, Արամ Ա. կաթողիկոսին, Թեհերանի թեմի առաջնորդ Մեպուհ արք. Սարգսեանին, եւ Նոր Զուղայի թեմական խորհուրդին:

Ըստ Անթիլիասի վեհարանի քարտուղար Խաչիկ Տէտէեանի՝ Արամ Վեհափառը, տեղեկանալով կատարուածին մասին, հրահանգած է Նոր Զուղայի ազգային իշխանություններուն՝ անյապաղ եւ ամենայն լրջութեամբ հետեւիլ խնդրին

Թէ՛ իրականութեան մէջ, ի՞նչ կատարուած է ձեռագիրներուն հետ, կարող են պարզել միայն վերոյիշեալ պատասխանատուները, որոնք ցարդ կը լռեն, մինչդեռ՝ ոչ միայն իրանահայ համայնքը, այլեւ ողջ հայ ժողովուրդը իրաւունք ունի իմանալու ճշմարտութիւնը եւ յատկապէս՝ խնդրին անմիջական պատասխանատու Նոր Զուղայի թեմական խորհուրդէն եւ թեմի առաջնորդ Բաբգէն արք. Չարեանէն կը սպասէ յստակ բացատրութիւն:




Ար: Տարկիս Անթարքոսի Երեսն Երեսն
Տար: 1845 թ. Երեսն Երեսն Երեսն



Ար: Կարոպ Երեսն Երեսն Երեսն
Տար: 1845 թ. Երեսն Երեսն Երեսն



Ար: Կարոպ Երեսն Երեսն Երեսն
Տար: 1845 թ. Երեսն Երեսն Երեսն



Ար: Կարոպ Երեսն Երեսն Երեսն
Տար: 1845 թ. Երեսն Երեսն Երեսն

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԷՆ ՊԱՇՏՈՆԱՊԵՍ ՀԱՍՏԱՏԵՑԻՆ՝ ՍՊԱՀԱՆԻ ՍԲ ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ԵԿԵՂԵՑԻԷՆ ՁԵՌԱԳՐԵՐ ԵՆ ԹԱԼԱՆՈՒԵՐ



Սպահանի հայոց թեմական խորհուրդէն ստացուած հետեւեալ հաղորդագրութիւնը կը հաստատէ Յուլիսի 7-ին առաջինը «Ազգ» օրաթերթին մէջ «Թալանուած ձեռագրեր Նոր Զուղայի Սբ Ամենափրկիչ վանքից» վերնագրով յօդուածին մէջ տպագրուած տեղեկութիւնը, որ Անգլիոյ մէջ աճուրդի են դրուած վանքի թանգարանի ձեռագիրներէն առանձին մանրանկարչութեան էջեր:

«Անմիջապէս կապուել ենք մեզ վստահած մասնագետ անձանց հետ՝ աւելի մօտիկից ստուգելու հարցը եւ մեզ տեղեակ պահելու, որպէսզի օրինական միջոցներով խնդիրը պարզենք: Հարցը խորհրդապահական ձեռով հետապնդում ենք՝ յանցագործին ի յայտ բերելու գործը չվնասելու նպատակով, եւ ձեռագրի էջերը վերադարձնելու նպատակով», ըսուած է հաղորդագրութեան մէջ:

Յաւելուածական

Հետաքրքրական է, որ Մեծի տանն Կիլիկիոյ կաթողիկոսարանէն Տէր Ներսէսի նամակին կը պատասխանեն, որ չեն հաւնիր իր ոճը, չեն կրնար մանրամասնութիւններ հաղորդել բոլոր անոնց, որոնք հետաքրքրուած կ'ըլլան խնդրով: Մեծի տանն Կիլիկիոյ կաթողիկոսարանէն խորհուրդ կու տան յաւելեալ տեղեկութիւններու համար դիմել Սպահանի հայոց թեմի առաջնորդ Բարգէն սրբազանին: Վերջինս գրութեամբ կը յորդորէ Տէր հօրը՝ ազգային գանձերու ապահովութիւնը չվտանգելու համար խուսափիլ նման հրապարակումներէն, եւ որ «կարելորդ խաղող ուտելն է, ոչ թէ այգեպան ծեծելը»: «Անմիջապէս հրապարակ ենք իջնում, երբ Նախիջեւանում հայկական խաչքարերն են պղծում, բայց երբ դա պատահում է մեր աչքի տակ, մեր տնից, չենք ուզում «պահակին ծեծել», կը պատասխանէ քահանան: ԱԶԳ

Տեսակէտ

Մի՞թէ պատմութիւնը կրկնում է, կամ նորից բանակցային տրամաբանութիւնը փոխելու անհրաժեշտութեան մասին



Հին, բայց ոչ հնացած խօսք է՝ պատմութիւնը կրկնում է: Քսաներորդ դարում Ռուսական կայսրութիւնը երկու անգամ (թէն երկրորդ անգամ ՍՍՀՄ անուանումով) տրոհուեց՝ 1917-18թթ. և 1991թ.: Երկու անգամ էլ Հարաւային Կովկասում առաջացան պետութիւններ, երկու անգամ էլ տարակարծութիւններ առաջացան այդ պետութիւնների սահմանների վերաբերեալ, և երկու անգամ էլ այդ իրավիճակը յանգեցրեց պատերազմների: Երկու անգամ էլ այդ պատերազմներում հայկական բանակը (նկատի ունեմ Հարաւային Կովկասի մասով) յաղթող դուրս եկաւ:

Առաջին անգամ միջազգային հանրութիւնը Հայաստանի Հանրապետութեանը համոզեց-պարտադրեց հայկական զինուած ուժերը դուրս բերել Լեռնային Ղարաբաղից կամ նորերը չտեղակայել այնտեղ: Օրինակ՝ լայնօրէն յայտնի է Արևելեան Անդրկովկասում Անտանտի երկրների զինուած ուժերի հրամանատար բրիտանացի գեներալ Ուիլիքս Թոմսոնի (William Thomson) 1918թ. դեկտեմբերի 2-ի ներկայիս Բերդաձոր գիւղում զօրավար Անդրանիկին փոխանցուած նամակի պատմութիւնը:

Նամակով Թոմսոնը Անդրանիկին յորդորում էր այլևս առաջ չշարժուել և չմտնել Լեռնային Ղարաբաղ, քանի որ առաջիկայում Փարիզի խաղաղութեան վեհաժողովում քննարկուելու էր նաև Հարաւային Կովկասի նորաստեղծ պետութիւնների սահմանների հարցը: Ակնարկն այն էր, որ պետք չէ աւելորդ բարդութիւններ ստեղծել. առանց դրանց էլ Լեռնային Ղարաբաղը հայաստանեան է լինելու, քանի որ բացառապէս հայաբնակ էր:

Յետագայում դարաբաղցիներն առանց Անդրանիկի էլ կարողացան ընդհանուր առմամբ պաշտպանել իրենց երկրամասը, իսկ Ատրպէյճանի Հանրապետութիւնը, չնայած յաւակնութիւններին և յոխորտանքին, երբեք, անգամ Թուրքիայի ռազմական



օժանդակութեամբ, ի վիճակի չեղաւ արդիւնաւետ վերահսկողութիւն (effective control) հաստատել Լեռնային Ղարաբաղի նկատմամբ: Ես նկատի ունեմ իհարկէ մինչ այն պահը, երբ ղարաբաղցիները կերան բոլշեփկեան կուտը:

Թոմսոնը ճիշդ էր կամ մասամբ ճիշդ էր: Փարիզի վեհաժողովը որոշեց, որ Լեռնային Ղարաբաղը, ինչպէս նաև Դաշտային Ղարաբաղի զգալի մասը պիտի մաս կազմէին Հայաստանի Հանրապետութեանը: Սակայն առանց այդ երկրամասում հայկական զօրքերի առկայութեան արդեօք այդ որոշումն ի կատար ածուե՞ց:

Ներկայումս, հաշուի առնելով հետևանքները, կարելի է տարբեր մօտեցումներ ունենալ Անդրանիկի արարքի հանդէպ: Սակայն յիշենք ժամանակի իրավիճակը և համեմատենք ներկայ իրավիճակի հետ:

Ա/. Ատրպէյճանի հիմնական դաշնակիցը և քաղաքական տատմերը՝ Թուրքիան, պատերազմում ջախջախիչ պարտութիւն էր կրել: Այսօր իրավիճակը բնաւ այդպէս չէ:

Բ/. Ատրպէյճանի Հանրապետութիւնը, թէև հռչակել էր իր գոյութիւնը, սակայն այն գոյութիւն չունէր ոչ de facto, քանի որ չունէր արդիւնաւետ վերահսկում քիչ թէ շատ նշանակալից որևէ տարածքի վրայ, և ոչ էլ de jure, քանի որ չունէր որևէ երկրի ճանաչում: Այսօր իրավիճակը բնաւ այդպէս չէ: Օսմանեան ճանաչումը տուեալ պահին չունէր իրաւական հետևանք, քանի որ սոյն կայսրութիւնն ինքն անվերապահ կապիտուլիացիայի հետևանքով (30 հոկտեմբերի, 1918թ.) դադարել էր միջազգային իրաւունքի ենթակայ (subject) լինելուց:

Գ/. Միջազգային հանրութիւնը հակամարտութիւնների լուծման հիմք միանշանակօրէն ընդունում էր ժողովուրդների ինքնորոշման սկզբունքը, որը առաջ էր քաշել ԱՄՆ նախագահ Վուոթո Ուիլսոնն իր յայտնի Տասնչորս կետանոց ուղերձի (Fourteen Points) մէջ 1918թ. Յունուարի 8-ին: Այս անվիճելի սկզբունքն էր դրուած բոլոր զինադադարների և նոր պետութիւնների սահմանների հիմքում: Այսօր իրավիճակը բնաւ այդպէս չէ: Ի դէպ, Ազգերի լիկայի՝ Հայաստանի սահմանները որոշող յանձնաժողովը 1920թ. Փետրուարի 24-ին հայ-վրացական և հայ-ատրպէյճանական սահմանների մասով վերահաստատեց այս դիրքորոշումը:

Դ/. Դաշնակից ուժերը Հարաւային Կովկասում, ի սատարում իրենց խօսքերի, ունէին 23 հազարանոց ուժեղ զօրաբանակ: Այսօր իրավիճակը բնաւ այդպէս չէ: Խօսւում է խաղաղապահների մասին, որոնք, ըստ վերջին տասնամեակների դառն փորձի, ի վիճակի չեն եղել պաշտպանել կամ կատարել իրենց իսկ ստանձնած առաքելութիւնը Պալքաններում կամ Ռուանտայում:

Այս համեմատութիւնները կարելի է դեռ շարունակել և, ցաւօք սրտի, դրանք չեն լինելու յօգուտ մեր ժամանակների: Տեսնենք ի՞նչ ունենք մենք հիմա, կամ ի՞նչ են մեզ առաջարկում: Առաջարկում են զօրքերը դուրս բերել մեր իսկ երկրից՝ դիմացը խոստանալով համոզել Ատրպէյճանին չսկսել պատերազմ, գոնէ մի քանի տարի:

Իհարկէ, պատերազմը բնաւ ցանկալի զարգացում չէ: Սակայն արդեօք



ազատագրուած տարածքների յանձնումը երաշխաւորում է խաղաղութիւնը: Իհարկէ ոչ: Իմ խորին համոզմամբ՝ այն աւելի է հաւանական դարձնում պատերազմի վերսկսումը Ատրպէյճանի կողմից: Եւ հակառակի նման, չկայ և չի լինելու նախկին 23 հազարանոց զօրաբանակը, որ կանխի այդ պատերազմը: Թէև, արդարութեան համար պէտք է նշել, որ որևէ զօրաբանակի տեղակայում մեր տարածաշրջանում տնական չի լինելու: Միւս գործօններին չեմ էլ անդրադառնում. այնքան ակնյայտ են տարբերութիւնները:

Հիմա՝ ամենակարևոր հարցը. ի՞նչ անել: Անել այն, ինչը նախատեսուած էր նման դէպքի համար: Դեռ ժամանակին հենց այսօրուայ քաղաքական մեծաւորները որոշել էին՝ Հարաւային Կովկասի երկրներին տրուում էր խիստ սահմանափակ ժամանակահատուած (որն աւարտուել է 1920թ. Նոյեմբերի 22-ին) փոխադարձ համաձայնութեամբ սահմանավեճերը կարգաւորելու համար: Փոխադարձ համաձայնութեամբ հարցերը չլուծուելու պարագային սահմանները որոշուում են Ազգերի լիկայի (ներկայումս՝ ՄԱԿ) հովանու ներքոյ գործող յանձնաժողովի իրաւարարութեամբ (arbitration) «սկզբունքօրէն հիմք ընդունելով ազգագրական տուեալները»:

Այսօր այս սկզբունքը կարող է կիրարկուել երկու տարբերակով՝ նախնական՝ հիմք ընդունելով 1920թ. տարեվերջի ազգագրական տուեալները, որոնցով ոչ միայն Լեռնային, այլև Դաշտային Ղարաբաղն էր Հայաստանի Հանրապետութեան մաս, սակայն Հայաստանը Ատրպէյճանին է զիջում մերձարաքսեան որոշ տարածքներ: Կամ հաշուի առնելով վերջին 90 տարուայ զարգացումները՝ հիմք ընդունելով ներկայիս ազգագրական պատկերը, որով Հայաստանի Հանրապետութեանն է անցնում հայկական ուժերի կողմից ներկայումս վերահսկուող տարածքները, իսկ Դաշտային Ղարաբաղի տիտղոսը Հայաստանը զիջում է Ատրպէյճանին:

Այսօր ակնյայտ է, որ բանակցային գործընթացը, չնայած հայկական կողմերի բոլոր ջանքերին և քաղաքական չափազանց փափկանկատութեանը, յայտնուել է փակուղու մէջ: Հիմնական պատճառն այն է, որ Ատրպէյճանը պատրաստ չէ դոյզն իսկ զիջումի: Ըստ էութեան, նա Լեռնային Ղարաբաղին առաջարկում է աւելի ցածր կարգավիճակ, քան ԼՂԻՄ-ն ունէր մինչև 1988թ.:

Այստեղ պէտք է շեշտել, որ միջազգային հանրութիւնը, յանձին միջնորդական խմբի, ունի մեղքի իր բաժինը: Փոխանակ Ատրպէյճանին պարտադրելու իրականացնել իր իսկ պարտաւորութիւնները (լայն առումով՝ ժողովուրդների ինքնորոշման սկզբունքը յարգելու, իսկ աւելի նեղ առումով՝ զինադադարը յարգելու)՝ իրականացնում է Ատրպէյճանին սիրաշահելու խիստ վտանգաւոր քաղաքականութիւն:

Ի վերջոյ, խաղաղութեան պահպանմամբ ոչ միայն հայկական կողմերը պիտի շահագրգռուած լինեն: Ատրպէյճանի կորցնելիքը հաստատ աւելի շատ է լինելու, և հետևանքն՝ աւելի աղետալի: Նաև թող մի քիչ էլ Արևմուքի գլուխը ցաւի իր ներդրումների ապագայի համար: Հաստատ մետաղի ջարդոնի գինն աւելի նուազ է, քանի նախային աշտարակների կամ նաւթա//գազամուղների:

Հասկանալի է, որ ներկայումս խիստ դժուար է փոփոխել բանակցային գործընթացի տրամաբանութիւնը, որի ակունքները գալիս են գրեթէ երկու տասնամեակի խորքից: Սակայն այլ ելք չկայ: Յատկապէս՝ քանի դեռ համաձայնեցուած չէ ամբողջը, ուրեմն համաձայնեցուած չէ ոչինչ: Երբեմն այլընտրանքի բացակայութիւնն է դառնում հիմնական շարժիչ ուժը, մեծ ջանքերի ու փոփոխութիւնների հիմնական մղիչը:

Ի վերջոյ, եթէ աշխարհի քաղաքական մեծաւորները այսօր պատրաստ չեն կենսագործելու առնուագն երեք փաստաթղթի մէջ (տես՝ Հայաստանի սահմանները որոշող Ազգերի լիկայի յանձնախմբի զեկոյցը և առաջարկները, 24 Փետրուարի, 1920թ.:; Սևրի պայմանագիր, յօդուած # 92, 10 Օգոստոսի 1920թ.:; Ուիլսոնի իրաւարար վճիռ, յաւելուած 1, թիւ # 2) ամրագրուած իսկ որոշումները, ապա ի՞նչ երաշխիք, որ վաղը հաւատարիմ կը մնան իրենց այսօրուայ կիսաբերան խոստումներին:

Արա Պապեան

Մոդուս վիվենդի կենտրոնի ղեկավար,

21 Յունիսի 2011թ.

«Մեր երկիրը նման է մի օրկանիզմի, որը կաթիլ-կաթիլ արնաքամ է լինում»



Հայաստանի մէջ, խումբ մը մտաւորականներ տազնապով կ'արձագանգեն՝ երկրին մէջ, տնտեսական եւ ազգային աղէտի վերածուած մեծ թիւերու հասնող արտագաղթին: Անոնք Յուլիս 1-ին, նամակ յղած են ՀՀ կառավարութեան եւ Ազգային Ժողովին, ուր նշած են փաստեր, որոնց մասին տեղեակ չեն կառավարութիւնն ու Ազգային Ժողովը:



Հակառակ պաշտօնական վիճակագրութեան, երկրի բնակչութիւնը նկատելիօրէն նուազեր է: Գիւղերէն եւ փոքր քաղաքներէն դէպի Երեւան հոսքը՝ ուրպանիզացիան, հիմնականօրէն կը վերածուի արտագաղթի:

Մտաւորականները կ'առաջարկեն ԱԺ նախագահին անյապաղ խորհրդարանական լսումներ կազմակերպել՝ բարձրացուած խնդրին շուրջ: Իսկ վարչապետին կոչ կ'ընեն ամենամօտ ժամանակին հասարակութեան եւ Ազգային Ժողովին ներկայացնելու՝ Հայաստանի ժողովրդագրական իրավիճակը շտկելու շօշափելի եւ վստահութիւն ներշնչող միջոցառումներ:

Ազգագրագէտ Հրանուշ Խառատեանը կը համարէ, որ հայրենասիրութիւնը ըսուածը արդէն վաղուց չի կարող խոչընդոտել երկիրը չլքելուն: «Ի՛նչ հայրենասիրութեան մասին է խօսքը, եթէ մարդն ինքն իր հայրենիքում տեկրատացում է, չի կարողանում սոցիալիզացուել: Մենք յաճախ լսում ենք արտայայտութիւններ, ինչպիսիք են՝ «սա իմ հայրենիքը չէ», «իմ երեխան գնաց բանակ գոհուեց, նրանց երեխաները տանն են», «իմ երեխան մի գործ չի կարողանում սկսել, նրանց երեխաները խոշոր պիզնէսների տէր են»... Հենց այդ «իմ»-ն ու «նրանց»-ը խօսում է այն մասին, որ մարդը այս երկիրն իրենը չի համարում, չի իրականացում այստեղ»:

Տնտեսագիտական գիտութիւններու փրօֆ., գերագոյն խորհուրդի նախկին պատգամաւոր Նորայր Մանասերեանն ալ յաւելած է, որ արտագաղթը ոչ միայն անձնական եւ քաղաքացիական բնոյթ կը կրէ, այլ տնտեսական. «Բնակչութեան արտագաղթն ամենամեծ կորուստն է, բայց այսօր արտագաղթում է նաեւ երկրի կապիտալը: Գործարարները որոշում են իրենց պիզնէսը տեղափոխել երկրից դուրս, իսկ մանր գործարարները արտերկրում են պիզնէս սկսում»:

Տնտեսագէտը նշած է նաեւ, որ սահմանամերձ գիւղերուն պետութիւնը պարտաւոր է հարկային արօնութիւններ տալու:

Մտաւորականները իրենց նամակին մէջ կը մէջբերեն նաեւ արտագաղթի պատճառները: Ըստ իրենց, արտագաղթի հիմնական պատճառը ոչ միայն աղքատութիւնն է, այլեւ կառավարման համակարգին հետ առնչուող հիմնախնդիրները, ինչպէս նաեւ բարոյական եւ հոգեբանական վատթարացող միջավայրը: Հայաստանի իշխանութիւնները կարող չեն պայմաններ ստեղծել աշխատունակ բնակչութեան մտաւոր եւ ֆիզիքական կարողութիւնները հայրենի երկրին մէջ լիարժէք օգտագործելու համար: Ընկերային ծայրայեղ կերպով բեւեռացուած ՀՀ քաղաքացին ինքզինք անպաշտպան կը զգայ մեծահարուստներու եւ պետական ծառայողներու կամայականութեանց առջեւ:

Բանասիրական գիտութիւններու դոկտոր, փրօֆ, Ազատ Եղիազարեանը անթոյլատրելի համարած է մտաւորականներու լռութիւնը: «Միգուցէ ոչ մի արդիւնք էլ չտայ, բայց մտաւորականը չպետք է լռի: Ես Գաւառից եմ, որ ժամանակին շատ աշխուժ քաղաք էր, իսկ հիմա ով գալիս-գնում է, ասում է՝ երեխայ չկայ ձեր

քաղաքում: Մեր երկիրը մի օրկանիզմի է նման, որի արիւնը կաթիլ-կաթիլ թափւում է»:

Ադրիւր՝ ՀԵՏՔ

Յաւերժ Բանտարկեալը



Ստիպուած եմ երրորդ անգամ անդրադառնալ ի պաշտպանութիւն Արցախեան պատերազմի հերոս, Շուշիի առանձնակի գումարտակի հրամանատար Ժիրայր Սեֆիլեանի նկատմամբ մեր իշխանութիւնների դաժան, ոչ հայեցի, ապագային կամայականութիւններին եւ իմ բողոքի ձայնը բարձրացնել: Որպէս հայ մտաւորական մեծ պարտքի զգացումով եմ լցուած ու չեմ կարող լռելեայն հաշտուել, համակերպուել Սեֆիլեան անհատի, նուիրեալ հայորդու, նրան բաժին ընկած դառը, ես կ'ասելի խեղուած ճակատագրի նկատմամբ:

Զարմանալի ազգ ենք ու զարմանալի ժամանակներ ենք ապրում. ականատեսը դառնում հազար ու մի անարդարութիւնների. ճշացող անարդարութիւնների...

Մի պահ թւում է, թէ կրկին Ստալինեան ժամանակներն են թելածում Հայաստան երկրում ու մարդը զրկուած է ազատ խօսելու, իր բողոքի ձայնը բարձրաձայնելու, արդարութիւն պահանջելու իրաւունքից, այլապէս նրան կամ աքսորը, կամ էլ բանտախոցն է սպասում. ու շինծու մեղադրանքներ ինչքա՛ն ուզես, ինչպէս Ժիրայր Սեֆիլեանի պարագայում:

Դարձել է *գոռ* - անգօրի երկիր. Ո՞վ իրաւունք ունի իշխանութիւններին մի թթու, մի լեղի, մի կծու խօսք ասել, նրանց *բաղչան* քար գցել:

Մարդկանց լեզուն արմատից են կտրում, որ չփորձեն յանկարծ բարբառել, իրենց հակադարձել...

Ժիրայր Սեֆիլեան



Հիմա էլ համաներու՞մ են շնորհում. մի կողմից թաղում են, միւս կողմից իւղում: Ու այսպէս դեմոկրատական, ժողովրդավարական պետութիւն ենք կառուցում զուտ Հայկական տարբերակով, որ անգամ Եւրոպան կը նախանձի մեր իշխանութիւնների աճապարարութեանն ու հնարամտութեանը:

Հարց է ծագում. մինեւ ե՞րբ է շարունակուելու իշխանութիւնների այս կամայականութիւնը, քանզի արդիւնքում դատարկում է, հայաթափում է Հայաստանը. ես այստեղ՝ Պրիւսէլում ականատեսն եմ այդ դաժան իրողութեանը, որ արտագաղթը գնալով նոր թափ է առնում, իսկ մեր՝ սփիւռքահայութեան տուն դարձի յոյսերը կամաց-կամաց մարում են այս *ֆոնի* վրայ:

Հարց է ծագում. ի՞նչ պատասխան պէտք է տանք սերունդներին, երբ անգամ մեր ազգի արժանաւոր զաւակները չեն գնահատում իշխանութիւնների կողմից, ազգի նուիրեալները իրենց կենդանութեան օրօք ենթարկում են հազար ու մի փորձութիւնների, հետապնդումների, բանտարկութիւնների...

Մեր իշխանութիւնները չկարողացան ինչպէս հարկն է գնահատել նրանց մեծութիւնը. փառաբանել, ոգելորել, երգեր ձօնել, կիսանդրիներ կառուցել,



փողոցներ ու դպրոցներ անուանարկել նրանց անուններով... որ նրանց գնահատուած հայրենասիրութիւնը օրինակ ծառայի, դաս հանդիսանայ մեր աճող սերնդի համար, որ Աստուած մի արասցէ, եթէ մեր երկրին վտանգ սպառնայ, նորից հայ երիտասարդը կուրծքը բացած գնայ Հայրենիքը պաշտպանելու:

Պէտք է անպայման մահացած լինէին, որ երկրպագուէին, իսկ եթէ կենդանի են մնացել՝ յաջորդ սերունդներին է վերապահուած նրանց անյայտութիւնից փրկելու առաքելութիւնը: Ի՞նչ պէտք է պատասխան տանք սերունդներին, ի՞նչ...

Կենդանի հերոսը՝ Ժիրայր Սեֆիլեանը, որին բաժին ընկաւ դաժան ճակատագիր՝ մեր իշխանութիւնների կողմից ոչ միայն չգնահատուեցին հայրենապաշտ, ազգանուէր երիտասարդի հերոսութիւնները, (միայն հէնց այն, որ հայրենիքի օրհասական օրերին թողեց իր փափուկ կեանքը եւ կանգնեց հայրենիքի պաշտպանութեան առաջին դիրքերում) այլ դարձաւ հետապնդման զոհ. երկրորդ նախագահի օրօք. 2006թ. Դեկտեմբերի 9-ին նա ձերբակալուեց յայտնի 301 յօդուածով (բռնութեան կոչ), իսկ ձերբակալութիւնից յետոյ մեղադրանք ներկայացուեց ապօրինի զէնք, զինամթերք պահելու մեղադրանքով. զէնք, որը 1997 թուականին նուիրել էր Արցախի բանակի հրամանատար Սամուէլ Բաբայեանը:

Դատարանը չկարողանալով հիմնաւորել երկու փաստարկները (զէնք զինամթերք), բայց այնուամենայնիւ վճռեց դատապարտել 1,5 տարի ազատազրկման, ապօրինի զինամթերք՝ փամփուշտ պահելու մեղադրանքով, այն դէպքում, երբ մեր երկրում մինչ օրս փամփուշտի մասին որեւէ օրէնք չունենք ընդունուած:

Հակառակ բազմաթիւ միջնորդութիւնների Ժիրայր Սեֆիլեանը ազատազրկման մէջ մնաց ուղիղ 1,5 տարի՝ կրելով պատժաչափի մինչեւ վերջին րոպէն: Պատիժը կրելուց յետոյ դարձեալ շարունակուեցին հետապնդումները. ե՛ւ երկրորդ, ե՛ւ գործող նախագահ Սերժ Սարգսեանի կողմից բազմիցս մերժուեցին Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիութիւն ստանալու նրա դիմում խնդրանքները:

Մարդկային նորմալ տրամաբանութեան մէջ չի տեղաւորուում. Արցախի հերոս տիտղոսին արժանացած Սեֆիլեանին Արցախի քաղաքացիութիւն ստանալու դիմումին ընդհանրապէս չարձագանգեց Արցախի նախագահ Արկաղի Ղուկասեանը, իսկ Բակօ Սահակեանը պատճառաբանեց, թէ Արցախի Ազգային Ժողովը դեռ չի ընդունել օրէնք երկքաղաքացիութեան մասին, այդ իսկ պատճառով չի կարող բաւարարել քաղաքացիութիւն ստանալու նրա խնդրանքը: Ի՞նչ է ստացուում. սփիւռքահայութիւնը իրաւունք չունի՞ մշտական բնակութիւն հաստատել մայր հայրենիքում, Արցախում: Յետոյ էլ Արցախում բնակչութեան թուաքանակի աճ ենք երագում: Թե՛ սա զուտ պատճառաբանութիւն էր, *դեմազոգիա* Սեֆիլեանի դիմումի մերժումն արդարացնող:

Մարդ չգիտէ, լայ՞, թե՞ խնդայ:



Ամենազաւեշտալին այն է, որ Շուշիի քաղաքապետը Սեֆիլեանին մերժեց շնորհել Շուշիի պատուաւոր քաղաքացիի կոչում՝ պատճառաբանելով, որ այդ կոչումը տրուում է միայն քաղաքի համար բարեգործութիւն անողներին. ստացում է քաղաքը ազատագրելը այդքան էլ «բարի գործ» չէ: Ահա թէ ովքեր են վճռում հերոսի եւ արժանապատիւ հայորդու հայրենիքում քաղաքացի լինելու ճակատագիրը:

Իսկ Սփիւռքի նախարար Հրանոյշ Յակոբեանին ուղղուած բազմաթիւ դիմում խնդրագրեր՝ միջնորդութեամբ հանդէս գալու, որ Սեֆիլեանը Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիութիւն ստանայ՝ ապարդիւն յոյսեր էին. անպատասխան մնացին... Այս *ֆոնի* վրայ դեռ սփիւռքահայութեանը տուն կանչող «ԱՐԻ ՏՈՒՆ» ծրագիր են մշակում, երբ անարդարութեան լաբիրինթոսում խճճուած Հայաստանցին այսօր փախչում է հայրենիքից, (ինչպէս եւ տողերիս հեղինակը) գոյատեւման փրկութիւն փնտռում օտար ափերում: Երբ նախարար տիկին Հրանոյշ Յակոբեանը հպարտանում է իր «Արի տուն» ծրագրով, որի շնորհից հազարից մի մարդ է յաջողում վերադարձնել Հայրենք, այն դէպքում, երբ հոգ չէ, թէ հազարից հարիւրը Հայրենիքից փախչում է, այո, բառիս բուն իմաստով փախչում է...

քանզի ապագայ չեն տեսնում ոչ իրենց, ոչ էլ իրենց երեխաների համար: Ինչու է նախագահ Սերժ Սարգսեանին ու տիկին Հրանոյշ Յակոբեանին թուում, որ Սեֆիլեանի առաջ իշխանութիւնների կառուցած պատնէշը վրիպում է սփիւռքահայութեան աչքից ու անտարբեր է նրա ճակատագրի նկատմամբ:

Իսկ Ժիրայր Սեֆիլեանի նման անկոտորում կամք ունեցող հայրենապաշտ հայորդին դեռ պայքարում է յանուն արդարութեան, յանուն իր իրաւունքների՝ մայր հայրենիքում ապրելու եւ արարելու...

Այս օրերին, երբ Հայաստանի Հանրապետութեան անկախութեան հռչակագրի 20-ամեակի առիթով, յուրախութիւն մեզ, համաներում շնորհուեց 396 բանտարկեալների, ու ներքաղաքական մթնոլորտի լարուածութիւնը բաւականին թուլացաւ, շատ այլախոհներ ազատ արձակուեցին, սակայն այդպէս էլ Ժիրայր Սեֆիլեանի քաղաքացիութեան հարցն իր լուծումը չստացաւ ու նա մնաց իր երկրում յաւերժ բանտարկեալ:

Կարծում եմ հասունացել է պահը, որ մեր իշխանութիւնները սթափ մտածեն, ցուցաբերեն բարի կամք եւ Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիութիւն շնորհեն Ժիրայր Սեֆիլեանին. այս հայրենապաշտ երիտասարդն արժանի է իր գրպանում կրելու Հայաստանի Հանրապետութեան քաղաքացու անձնագիրը. նա վաստակել է այդ իրաւունքը

Սոնա Արշունեցի- (Պրիւքսել)

«Մութաֆեան Պատրիարքը Կոմիտաս Վարդապետին նման վախի եւ սարսափի զոհ է դարձեր»



Կը յայտարարէ յայտնի մտաւորական Ռակըփ Զարաքոլուն

Ռակըփ Զարաքոլուն մեր հասարակութեան քաջ յայտնի թուրք մտաւորականներէն է: Թուրքիոյ մէջ, Հայոց ցեղասպանութեան մասին հրապարակաւ առաջին արտայայտուողներու շարքին՝ առանցքային տեղ ունի ան: Ան ոչ միայն թարգմանաբար հրատարակեր է ցեղասպանութեան մասին հայաստանեան, սփիւռքահայ եւ օտարերկրացի գործիչներու բազմաթիւ աշխատութիւնները, այլեւ կատարեր է թրքական ժխտողականութեան խորքային արմատներու, Քեմալ Աթաթիւրքի մերձակայ շրջապատի հայասպան դիմագիծի, հայերու բնաջնջումէն ետք օսմանեան Թուրքիոյ հայկական վիլայէթներու մէջ տեղի ունեցած տնտեսական եւ մշակութային կտրուկ անկման մասին յանդուգն ուսումնասիրութիւններ: Ան Հայոց ցեղասպանութիւնը, առաջինը ըլլալով, դիտարկեր է որպէս ազգերու ինքնորոշման իրաւունքի խափանման միջոց, համարելով զայն որպէս մարդու իրաւունքներու ոտնահարման առաւելագոյն դրսեւորումը մեր ժամանակներուն:

Յունիս 28-ին՝ «Էվրենսել» թերթին մէջ լոյս է տեսած իր՝ Պոլսոյ հայոց պատրիարք Մեսրոպ Բ Մութաֆեանի առողջական անմխիթար վիճակին նուիրուած բաւականին զգացմունքային ու յուզումնալից յօդուածը, որ կը կրէ «Կոմիտասի երկրորդ դէպքը» վերնագիրը: Ահա թէ ինչ կը գրէ ան. «Սիրելի եւ մեծապատիւ Մեսրոպ Բ պատրիարքի միջադէպը, իմ խորին համոզումով, Կոմիտաս վարդապետի երկրորդ դէպքն է, որուն հայ ժողովուրդը ականատես կ'ըլլայ երկրորդ անգամ: Ե՛ւ Կոմիտաս վարդապետը, ե՛ւ Մութաֆեան պատրիարքը վախի ու սարսափի զոհերն են: Անոնք իրենց մարմնով եւ հոգով վճարեր են այն սպառնալիքներուն դիմաց, որոնց թիրախն էր դարձեր հարազատ համայնքը: Ատոր պատասխանատուն՝ այդ նոյն վերնախաւն է եւ միեւնոյն մտայնութիւնը՝

իթթիհատականութիւնն ու նոր իթթիհատականութիւնը: Հակառակ պետական խոչընդոտներուն, Մուրաֆեանի ընտրութիւնը կը խօսէր համայնքի արժանապատիւ կեցուածքին եւ միասնականութեան մասին...»:

«Հարցազրոյցներէն մէկուն մէջ, Մեսրոպ Բ-ն կ'ըսէր.« Եկեր է Հայաստանի եւ Սփիւռքի հետ յարաբերութիւնները զարգացնելու ժամանակը: Պէտք է լրագրողներու, գիտնականներու, քաղաքացիական հասարակութեան ներկայացուցիչներու փոխադարձ այցեր կազմակերպել, որպէսզի վերականգնուի փոխվստահութիւնը: Միաժամանակ կը ցանկայի Թուրքիոյ մեծ ժողովին մէջ տեսնել թրքահայութեան ներկայացուցիչներ...»:

«Սակայն Թուրքիոյ մէջ կը ծրագրուէր քառասային վիճակ ստեղծել, որուն առանցքին յայտնուեցաւ նաեւ Մեսրոպ Բ-ը: Պատրիարքարանը, հայկական վարժարաններն ու հաստատութիւնները յայտնուէր էին սպառնալիքներու, վիրաւորանքներու տեղատարափի տակ, իսկ ինք դարձեր էր իր գառնուկներու հոգերով ապրող հովիւ: Իսկոյն քննադատութեան ենթարկուեցաւ, նոյնիսկ նշուեցաւ՝ զայն մէկ այլ պատրիարքի հետ փոխարինելու անհրաժեշտութեան մասին: Եւ «Էրկենիքոնի» ահաբեկչութիւնը՝ ինչպէս Հրանդ Տինքի, այնպէս ալ Մեսրոպ պատրիարքի պարագային, հասաւ իր նպատակին: Թէեւ անոր մարմինը չի ոչնչացուցին, սակայն հոգին անբուժելիօրէն վիրաւորեցին: Ինծի համար, Մեսրոպ Բ-ն ալ նախապէս ծրագրուած ահաբեկչութեան զոհն է: Ան առաջին լուրջ հարուածը ստացաւ Հրանդ Տինքի յուղարկաւորութիւնը ղեկավարելու ատեն...»:

Աղբիւր՝ ԱԶԳ

**Աւագակապետութեան տապալումից դէպի երկխօսութիւն.
իշխանութիւնն ու ընդդիմութիւնը պատրաստուում են
բանակցութիւններ**



Ֆոտոլուր



Իշխող կոալիցիայի և ընդդիմադիր Հայ ազգային քոնկրետի միջև երկխոսությունը տեղի կ'ունենայ, ընդ որում՝ տեղի կ'ունենայ պատուիրակությունների ձևաչափով, ինչպես առաջարկել էր քոնկրետը, սակայն ոչ թե արտահերթ ընտրությունների հարցով, ինչպես պնդում է քոնկրետը, այլ երկրի համար արդիական հարցերի լայն շրջանակի շուրջ:

ՀՀ նախագահի մամուլի քարտուղար Արմեն Արզումանեանը յայտարարել է. «Յունիսի 17-ի անդրադարձում ՀՀ նախագահը յստակ նշել էր, որ եթե մէկ կոնկրետ հարցի շուրջ բանակցությունների փոխարեն Հայ ազգային քոնկրետն իրապէս պատրաստ է շարունակել երկխոսությունը մեր երկրի զարգացման ուղեգծին, արտաքին ու ներքին քաղաքականութեանն առնչուող կարևորագոյն հարցերի լայն շրջանակում և ցանկութիւն ունի դա իրականացնել միայն յատուկ նշանակուած մարդկանց միջոցով, ապա կոալիցիոն կուսակցությունների ներկայացուցիչները կարող են նստել քննարկումների սեղանի շուրջ: Կոալիցիոն կուսակցությունները ձևաւորել են համապատասխան աշխատանքային խումբ, որի կազմում ընդգրկուել են երկուական ներկայացուցիչ իւրաքանչիւր կուսակցութիւնից»: Ընդդիմութիւնից աշխատանքային խմբի կազմը նոյնպէս յայտնի է:

«Հայոց համազգային շարժում» կուսակցութեան (ՀԱԿ-ի անդամ) վարչութեան նախագահ Արամ Մանուկեանն ասել է, որ սեպտեմբերից յետոյ բանակցություններ չեն վարուի. «Մինչև սեպտեմբեր նրանք (իշխանությունները) պետք է պատասխանեն քոնկրետի բոլոր հարցերին: Սեպտեմբերին գործընթացը կամ կ'աւարտուի, կամ կ'սկսուի նոր փուլ»:

Դաշինքի պատուիրակութեան կազմը հրապարակուել է Հանրապետական կուսակցութեան «աւանդական» թնի՝ երկխոսութեան մասին բացասական կարծիքների ֆոնին: Մասնաւորապէս, կուսակցութեան փոխնախագահ Գալուստ Սահակեանը խիստ հեզմանքով է արտայայտուել քոնկրետի ու նրա առաջարկած «վերջնագրերի մասին»՝ յայտարարելով, որ քոնկրետի հետ երկխոսութեան նպատակով պատուիրակութեան ստեղծումն իր համար «անսպասելի երազ» կը լինէր:

Այսքանից կարելի է հետևություն անել. կա՛մ ՀՀԿ մի մասն արտայայտուել է երկխոսութեան դէմ, սակայն Սերժ Սարգսեանը դէմ է գնացել այդ կարծիքին, կա՛մ էլ երկխոսութիւն պնդող միջազգային հանրութեան ճնշումը աւելի ուժեղ դուրս եկաւ: Թեև ակնյայտ է մի բան՝ Սարգսեանը ակնյայտօրէն ժամանակ է շահել, որպէսզի արտահերթ ընտրությունները դուրս գան բանակցությունների օրակարգից:

Ի՞նչը կարող է լինել իշխանութիւն-ընդդիմութիւն բանակցությունների թեման, եթէ ոչ արտահերթ ընտրությունները: Ընդդիմութիւնը պնդում է համակարգային բարեփոխումներ անել, սակայն իշխանութիւնն առանց նրա էլ յայտարարում է բարեփոխումների կուրսի մասին և նոյնիսկ ցուցադրական քայլեր է ձեռնարկում: Ընդ որում, համակարգը ոչ միայն չի փոխուում, այլև ամրապնդում է իր դիրքերը՝

վատթարացնելով իրավիճակը երկրում: Այդ մասին է վկայում թե՛ ըստ «Ֆորբսի» Հայաստանի երկրորդ տեղը աշխարհի վատթարագոյն տնտեսութիւնների ցուցակում և թե՛ վարչապետ Տիգրան Սարգսեանի «կատակն» այն մասին, որ եթէ դադարեցնենք արտագաղթը, ապա երկրում կարող է յեղափոխութիւն լինել:

Ընդդիմադիր «Ժառանգութիւն» խմբակցութեան ղեկավար Ստեփան Սաֆարեանը յայտարարել է, որ այդ ողջ գործընթացը թատերականացուած շուու է կամ սերիալ, «չարժի դրանից երկրի համար ինչ-որ լուրջ փոփոխութիւններ սպասել»:

«Իրականում լուծուում է մանդատների հարցը, ոչ աւելին», - ընդգծել է Սաֆարեանը:

Քոնկրետի կազմից դուրս եկած ակտիւիստների ստեղծած «Ազատ Ժողովրդավարներ» կուսակցութեան վարչութեան անդամ Արթուր Ավթանդիլեանը նշել է, որ ցաւօք, երկխոսութեան մէջ հանրութեանը չի տեսնում: Որակական փոփոխութիւնների հասնելու խաղաղ ճանապարհը կարելի է միայն ողջունել, ասել է նա՝ յիշեցնելով, որ քոնկրետի սկզբնական նպատակը աւազակայետութեան տապալումն էր և սահմանադրական կարգերի հաստատումը, և հազիւ թէ դրան հնարաւոր է հասնել փակ ձևաչափով բանակցութիւնների ճանապարհով, առանց հանրութեան մասնակցութեան, որն օտարացած է իշխանութիւնից, իսկ այժմ նաև՝ ընդդիմութիւնից:

armenianow

Անցուդարձ

Անհատնում կորովի տէր գիտնականը



Վահագն Տատրեանը 85 տարեկան է

Յոգնածութեան նշոյլ անգամ չցուցաբերելով, Թորոնթոյի մէջ գործող՝ Զօրեան ինստիտուտի ցեղասպանութեան ուսումնասիրութեան բաժնի տնօրէն, միջազգային ճանաչման արժանացած յայտնի ցեղասպանագէտ փրօֆ. Վահագն Տատրեանը վերջերս նշեր է իր ծննդեան 85-ամեակը, այդ առթիւ կը տեղեկացնէ վերոնշեալ ինստիտուտէն ստացուած հաղորդագրութիւնը: Ան անհատնում կորովով 50-է աւելի տարիներ է նուիրած ուսումնասիրելու համար ցեղասպանութեան հիմնախնդրին ամենատարբեր դրսեւորումներն ու ոլորտները:

Ականաւոր գիտնականի յոբելեանին առթիւ, Հայաստանի Հանրապետութեան նախագահ Սերժ Սարգսեանը նշեր է. «Դուք մեր ժամանակների ամենակարեւոր գիտնականներից մէկն էք, ում գործն ու յայտնաբերումները հսկայական նշանակութիւն ունեն ինչպէս հասարակական, այնպէս էլ քաղաքական ոլորտներում: Հայերի ցեղասպանութեան միջազգային ճանաչման ասպարէզում կատարած ձեր ներդրումներն ու ժխտողական փորձերի դէմ յարատեւ ջանքերը միշտ էլ յաջողութեամբ են պսակուել: Ձեր աշխատանքը անգնահատելի ազդեցութիւն է ունեցել ընդհանրապէս ցեղասպանութեան եւ նրա ժխտողականութեան ուսումնասիրութեան ասպարէզում՝ դարձնելով Հայաստանը այդ բնագաւառի առաջաւոր երկրներից մէկը»:

Իր յարատեւ նուիրածութեան եւ ձեռքբերումներուն համար, Տատրեանը շնորհաւորեր են նաեւ բազմաթիւ ականաւոր գործընկերներ աշխարհի տարբեր ծայրերէն:

Մեծ ցեղասպանագէտի ծննդեան 85-ամեակին առիթով, «Ազատ Խօսք»ը սրտագին կը շնորհաւորէ Վահագն Տատրեանը, իրեն մաղթելով քաջառողջութիւն, անսպառ կորով եւ աննկուն կամք՝ շարունակելու համար իր գիտական պրպտումներն ու ուսումնասիրութիւնները եւ նոր լոյս սփռել ցեղասպանագիտութեան եւ յատկապէս Հայոց ցեղասպանութեան փաստերու վերլուծութեան մէջ:

**«ԻՐԱՆ ՊԱՏՐԱՍՏ Է ՂԱՐԱԲԱՂԵԱՆ ՏԱԳՆԱՊԻ ԼՈՒԾՄԱՆ
ՀՈԼՈՎՈՅԹԻՆ ՄԷՋ ՄԻՋՆՈՐԴ ԴԱՌՆԱԼՈՒ» Կ'ԸՍԷ ԼԱՐԻՃԱՆԻ**



Ալի Լարիճանի

Ատրպէյճանական «Մալամ Նիուզ» լրատու գործակալութիւնը կը հաղորդէ, որ Իրանի խորհրդարանի նախագահ Ալի Լարիճանի Պաքուի մէջ տրուած մամլոյ ասուլիսի մը ընթացքին յայտնած է, որ եթէ Ատրպէյճան Թեհրանի դիմէ, ապա Իրան պատրաստ պիտի ըլլայ Լեռնային Ղարաբաղի տագնապի լուծման գործին մէջ միջնորդութիւն կատարելու:

«Ատրպէյճանը սկիզբէն նախընտրած է հարցը լուծել միջազգային կազմակերպութիւններուն միջնորդութեամբ: Մակայն եթէ Ատրպէյճան մեզի դիմէ, Իրան միշտ պատրաստ պիտի ըլլայ միջնորդ դառնալով տագնապի լուծման օգնելու», ըսած է ան:

Պատասխանելով Լեռնային Ղարաբաղի մէջ խաղաղապահներու տեղակայման հեռանկարին մասին հարցումի մը՝ Լարիճանի ըսած է, որ այդ հարցին պատճառով չէ, որ Իրանի նախագահ Մահմուտ Ահմատինեժատի Հայաստան այցելութիւնը յետաձգուած է: «Այցելութիւնը յետաձգուած է թեքնիք պատճառներով», նշած է ան:

Կիպրոսի Նախագահ.- Թուրքիան չի կրնար ԵՄ անդամ դառնալ



«Թուրքիան պէտք է պատասխան տայ իր կատարած յանցագործութիւններուն համար», - յայտարարեւ է Կիպրոսի նախագահ Տիմիթրիս Խրիսթոֆիասը, կը յայտնէ «Famagusta Gazette» պարբերականը:

Ան նշեր է, որ աւելի քան 37 տարի է, ինչ Թուրքիան կը շարունակէ Կիպրոսի գրաւման քաղաքականութիւնը, ինչ որ, իր հերթին, հետք կը ձգէ Կիպրոսի ժողովուրդի ամենօրեայ կեանքին վրայ:

Նախագահ Խրիսթոֆիասը իր յայտարարութեամբ հաւաստիացուցած է, որ կառավարութիւնը իր ներուժէն աւելին կ'ընէ, որպէսզի պարզէ թէ ինչ տեղի ունեցած է 1974-ի անհետ կորածներուն հետ: «Անհետ կորածներու հարազատներուն միայն Թուրքիան կրնայ պատասխան տալ, թէ ո՞ր են իրենց հարազատներու մարմինները, քանի որ այդ ամէնին վերաբերեալ նիւթերը կը գտնուին Թուրքիոյ բանակի պահօցներուն մէջ», - նշած է Կիպրոսի նախագահը:

Ըստ նշեալ աղբիւրին, վերջինը ընդգծեր է, որ Թուրքիան չի կրնար հրաժարիլ մարդկութեան դէմ կատարած իր յացագործութիւններէն, քանի որ Թուրքիան արդէն դատապարտուեր է Մարդու Իրաւունքներու Եւրոպական դատարանին կողմէ:

Թուրքիան, ըստ իրեն, չի կրնար շարունակել «թակել» Եւրոմիութեան դուռը, քանի որ իր ձեռքերը դեռ թաթախուած են հազարաւոր մարդկանց արիւնով: Աղբիւր՝ Panorama.am

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼՐԱՏՈՒԱՄԻՋՈՑՆԵՐԸ՝ ՔԱԶԱՆԻ ՀԱՆԴՊՈՒՄԻՆ ՄԱՍԻՆ



Սարգսեան, Մետվետեւ եւ Ալիեւ՝ Քազանի մէջ Ամերիկեան ազդեցիկ «Նիւ Եորք Թայմզ» օրաթերթը կը գրէ, որ միջազգային միջնորդները մեծ յոյսեր կը կապէին 24 յունիսին Հայաստանի եւ Ազրպէյճանի նախագահներու հանդիպումին՝ կոչ ուղղելով ընդունելու հիմնական սկզբունքները, որոնք Լեռնային Ղարաբաղի շուրջ բանակցութիւնները դուրս պիտի բերէին փակուղիէն:

«Ռուսիան, Ֆրանսան եւ Միացեալ Նահանգները փոխադարձաբար համաձայնեցուած ճնշում կը գործադրէին կողմերուն վրայ, որպէսզի վերջիններս Քազանի մէջ ընդունին հիմնարար սկզբունքները: Ռուսիոյ նախագահ Տմիթրի



Մետվետել շատ ժամանակ եւ քաղաքական դրամագլուխ ներդրած էր այդ նախագիծին մէջ, սակայն Ռուսիոյ մօտեցող ընտրութիւններու շրջանը աւելի դժուար պիտի դարձնէ համաձայնութիւնը», կը գրէ օրաթերթը: Վերլուծաբան Թոմաս տէ Վաալ օրաթերթին յայտնած է, որ «կ'ենթադրուէր, որ եկած է պահը: Տարուէ տարի կողմերուն դիրքորոշումները կը կարծրանան, հետեւաբար՝ պատերազմիլը աւելի դիւրին կը դառնայ»:

Բանակցութիւններուն մասնակից դիւանագետ մը «Նիւ Եորք Թայմզ»ին յայտնած է, որ Քազանի հանդիպումը ապարդիւն եղած է, եւ համաձայնութեան շուրջ աշխատանքը պիտի շարունակուի: Ըստ անոր, երկու կողմէն ալ յառաջընթացը աւելի փոքր եղած է, քան ինչ որ կ'ակնկալէին միջնորդները: Օրաթերթը կը գրէ, որ ներքաղաքական խնդիրները լուրջ խոչընդոտ են լուծման համար, եւ կը նշէ, որ երկու երկիրներու ղեկավարները վրդովմունքի մեծ ալիք պիտի բարձրացնեն իրենց երկիրներուն մէջ, եթէ զիջումներ կատարեն: Քազանէն առաջ միջնորդները կ'ըսէին, որ լուրջ տարակարծութիւնները աւելի քիչ են, սակայն յստակ չէր՝ արդեօք երկու ղեկավարները քաղաքական կամք պիտի ունենան՝ համաձայնագիրը իրենց քաղաքացիներուն ներկայացնելու: Ամերիկեան այլ ազդեցիկ օրաթերթ մը՝ «Ուոլ Սթրիթ Ճըռնըլ» կը գրէ, որ Քազանի վեհաժողովը կողմերուն համար շարք մը սկզբունքներու շուրջ համաձայնութեան հասնելու վերջին տասնամեակի լաւագոյն առիթն էր:

Ռուսական «Էխօ Մոսքվի» ձայնասփիւռի կայանը կը նշէ, որ Քազանի հանդիպումը ապարդիւն աւարտած է, հակառակ անոր որ մինչ այդ կ'ակնկալուէր, որ տագնապի լուծման «ճամբու քարտէս» կ'որդեգրուի: Սակայն կողմերը սահմանափակուած են «փոխըմբռնման» մասին ընդհանրական յայտարարութիւններով: «Էխօ Մոսքվի» կը նշէ, որ վեհաժողովէն առաջ կը թուէր, որ Ռուսիոյ նախագահը շատ մօտ եղած է իր արտաքին քաղաքական ամենէն լուրջ յաջողութեան, եւ ամէն ինչ պատրաստ է համաձայնագրի ստորագրութեան համար:

«ԱՏՐՊԵՅՃԱՆԻ ԲՈՆԱԳՐԱԻՈՒԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՆ» ՄԱՍԻՆ ԲԱՆԱԶԵԻԸ ԴԱՐՁԵԱԼ ՄԱԿ-Ի ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳԻՆ ՎՐԱՅ




ՄԱԿ-ի Ընդհանուր ժողովի պաշտօնական կայքէջը կը հաղորդէ, որ «Ատրպէյճանի բռնագրաւուած տարածքներուն» մասին բանաձեւը դարձեալ ընդգրկուած է ՄԱԿ-ի Ընդհանուր ժողովի 66-րդ նստաշրջանի նախնական օրակարգին վրայ:

Կայքէջը կը նշէ, որ 66-րդ նստաշրջանի նախնական օրակարգին վրայ ընդգրկուած է նաեւ «ՎՈՒԱՄ-ի (Վրաստան, Ուքրանիա, Ատրպէյճան, Մոլտաւիա) տարածքին մէջ երկարաձգուող տագնապներու եւ միջազգային հանրութեան անվտանգութեան եւ զարգացման համար անոնց հետեւանքներուն» մասին կէտը:

«Էխօքաւքազա» կայքէջը կը հաղորդէ, որ Հայաստանն ու Ռուսիան ՄԱԿ-ի մէջ դեմ քուէարկած են Աբխազիայէն եւ Հարաւային Օսեթիայէն բռնի տեղահանուածներու կարգավիճակը սահմանող բանաձեւին: Բանաձեւին թեր քուէարկած են Միացեալ Նահանգները, Ատրպէյճանը, Պալթեան երկիրները, Բրիտանիան եւ քանի մը տասնեակ երկիրներ: Թուրքիա, Զուիցերիա, Իսրայէլ եւ 71 այլ պետութիւններ ձեռնպահ մնացած են:

Բանաձեւը որդեգրուած է 57 թեր եւ 13 դէմ քուէներով:

Քաղաքագետ.-«ՀՀ ներքաղաքական կեանքում արմատական հետադարձութիւնը որոշակիօրէն կ'ուժեղանայ»



«Ներքին քաղաքական գործընթացների դանդաղում է տեղի ունենում: Կողմերը կը փորձեն պահել գործընթացը, մամուլը ասուլիսներ կը լինեն, բայց ռեալ քաղաքական շարժեր կը սկսուեն աշնանից, երբ նախընտրական արշաւ մեկնարկի: Կարծում եմ, արմատական հետադարձութիւնը որոշակիօրէն կ'ուժեղանայ, քանի որ նրա նուազումը կողմերի համար ակնյայտօրէն կորուստների է յանգեցնում», - Յուլիս 4-ին, անդրադառնալով ՀՀ -ի մէջ տիրող ներքաղաքական իրավիճակին, լրագրողներու հետ հանդիպման ժամանակ ըսաւ Կովկասի ինստիտուտի տնօրէն, քաղաքագետ Ալեքսանդր Իսկանդարեանը:

«Ո՛չ ընդդիմութեանը, ո՛չ իշխանութեանը պէտք չէ ընդունել որպէս մոնոլիտ կառոյցներ: Երկուսն էլ այդպիսին չեն: Մենք ունենք ոչ թէ մէկ ընդդիմութիւն, այլ ընդդիմութիւններ, ոչ թէ իշխանական կուսակցութիւն, այլ իշխանութիւնների կուսակցութիւն: Այդ կուսակցութիւնն իր ներսում բազմաթիւ հակասութիւններ ունի: ՀՀԿ-ն դաշտ է, որտեղ իշխանական մի քանի խմբաւորումների միջեւ կոնսենսուս է կայանում», - նշեց բանախօսը:

Ասուլիսի աւարտին, անդրադառնալով Վրաստանի մէջ հայկական եկեղեցիներու ու հայ-վրացական միջ-եկեղեցական յարաբերութիւններու խնդրին, քաղաքագետը նշեց. «Իհարկէ, վրացական կողմի առաջարկած փաստաթուղթը յանկարծակի չէր գրուած: Սա գործընթաց էր, որը Վրաստանում ընթանում էր բաւական երկար ժամանակ, եւ դա հասկանում էին նաեւ մեր եկեղեցու ներկայացուցիչները: Կաթողիկոսի այցը իր հերթին եւս մեծ գործընթացի մի մասն էր կազմում»:

«Տեղի ունեցածը շատ հետաքրքիր էւ շատ կարեւոր է: Հայաստանում այնքան լաւ չեն հասկանում Վրաստանի ներքաղաքական իրավիճակը՝ կապուած եկեղեցու ու կրօնի հետ: Եկեղեցին Վրաստանում ընդհանրապէս այնպիսին չէ, ինչպիսին

Հայաստանում է: Վրաստանում եկեղեցին շատ լուրջ քաղաքական ուժ է հանդիսանում: Ես կ'ասեի՝ նախագահից յետոյ երկրորդը: Եկեղեցու շրջանակներում գործում են խիստ ազգայնական խմբավորումներ, քանզի ազգայնականությունը Վրաստանում կրում է աւելի շատ կրօնական, քան ազգային բնույթ», - ըսաւ քաղաքագետը:

Ան նաեւ ընդգծեց, որ եկեղեցին Վրաստանի մէջ միակ լուրջ մոլի հակա-արեւմտեան ուժն է:

Աղբիւր՝ Panorama.am

ԻԼԻԱ Բ. ՊԱՏՐԻԱՐԺԸ ԿՈՉ ՈՒՂՂԵՑ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ԿՐՕՆԱԿԱՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹԵԱՆՑ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՇՆՈՐՀՈՂ ՕՐԻՆԱԳԻԾԸ



Ամենայն վրաց Իլիա Բ. պատրիարքը յատուկ յայտարարութեամբ դիմեց Վրաստանի խորհրդարանին եւ կոչ ուղղեց կասեցնելու քաղաքացիական օրէնսգիրքի փոփոխութիւնները, որոնցմով երեսփոխանները կը պատրաստուին իրաւաբանական անձի կարգավիճակ տալ Վրաստանի մէջ գործող հինգ կրօնական կազմակերպութիւններուն, որոնց շարքին՝ Հայ առաքելական եկեղեցւոյ: «Մեր եկեղեցին երբեք դեմ չէ կեցած կարգավիճակի տրամադրման, սակայն կառավարութիւնը պարտաւոր էր այս հարցին շուրջ բազմակողմանի պետական յանձնախումբ ստեղծել», յայտարարեց Վրաց եկեղեցւոյ հոգեւոր պետը: Հարցը յանձնախումբի միջոցով լուծելու մասին Իլիա Բ. պատրիարքը յայտարարած էր Ամենայն հայոց Գարեգին Բ. կաթողիկոսի՝ յունիսին Վրաստան այցելութեան ժամանակ:

Վրաց պատրիարքը յայտարարած էր, որ եկեղեցիներու մասին խօսելու ժամանակ՝

պէտք չէ մոռնալ, որ երկու կողմերն ալ պահանջներ ունին: Ան նաեւ հայկական կողմին առաջարկած էր համապատասխան յանձնախումբ ստեղծել՝ վիճաբարոյց հարցերը քննարկելու համար:

Թէեւ հոգեւոր պետերը այդպէս ալ համաձայնութեան չէին եկած, սակայն Վրաստանի իշխող Ազգային շարժում կուսակցութիւնը՝ նախագահ Սահակաշվիլիի գլխաւորութեամբ, անցեալ շաբաթավերջին շրջանառութեան մէջ դրած էր օրէնսդրական փոփոխութիւնը եւ առաջին ընթերցումով ընդունած էր զայն: Իլիա Բ. պատրիարքը յայտնեց, որ այդ որոշումը անակնկալ էր ոչ միայն հոգեւոր դասին, այլեւ Վրաստանի ժողովուրդին համար: Ան անհրաժեշտ նկատեց նշել, որ որեւէ այլ երկրի մէջ մինչեւ այսօր վրացական ուղղափառ եկեղեցիներու տնօրինման ու պահպանութեան հարցը չէ դրուած, ոչ ալ քննարկուած է անոնց կարգավիճակ տրամադրելու հարցը, ինչպէս նաեւ այս համապատկերին մէջ իրենց համար անհասկնալի է այսպիսի կարեւորագոյն փաստաթուղթի ընդունումը արագ ընթացակարգով եւ առանց հասարակական քննարկումներու: Վրացական եկեղեցւոյ հոգեւոր պետին այս յայտարարութիւնը մեծ աղմուկ

բարձրացուցած է երկրին աշխարհիկ վերնախաւին մէջ: Ընդդիմադիր ուժերը կը պնդեն, որ իշխանութիւնները կը դաւաճանեն ազգային շահին եւ նոյնիսկ կը շրջանցեն պատրիարքին խրատները:

ՍՓԻՌՔԻ ՆԱԽԱՐԱՐԸ Կ'ԱՆԴՐԱԴԱՌՆԱՅ ՀԵՏՁԷՏԷ ՄԵԾՑՈՂ ԱՐՏԱԳԱՂԹԻ ՄԻՏՈՒՄՆԵՐՈՒՆ



Հայաստանի Հանրապետութեան սփիւռքի նախարար Հրանուշ Յակոբեան՝ Յուլիս 6-ին, լրագրողներուն հետ հանդիպման ընթացքին, ցաւալի նկատեց ներկայ արտագաղթի միտումները: Ան արտագաղթի աշխուժացումը պայմանաւորեց հիմնականին մէջ ընկերային-տնտեսական բարդութիւններով: «Ես կը հաւատամ, որ յատկապէս ռուսական տարածք մեկնող մեր հայրենակիցները ժամանակաւոր աշխատանքային արտագաղթողներ են, որոնք ոչ թէ կը մեկնին

յաւերժ, այլ կ'երթան աշխատանք փնտռելու եւ իրենց ընտանիքները այստեղ պահելու նպատակով», նշեց նախարարը: Ան նաեւ յայտնեց, որ ամէն ջանք կը գործադրուի աշխուժացնելու ներդրումային քաղաքականութիւնը, յատկապէս՝ սփիւռքահայերուն կողմէ:

«Անոնք, որոնք դուրսը բարձր կը խօսին անոր մասին, ճիշդ կ'ըլլայ, որ յստակ գործերով օգնեն, որ այստեղ աշխատատեղեր ստեղծուին», առաջարկեց նախարարը՝ ընդգծելով, որ իրենց խնդիրը ներգաղթի կազմակերպումը, քարոզչութիւնը եւ աշխուժացումն է: «Այստեղ նման միտումներ կան, որ մարդիկ Հայաստան կու գան մնայուն բնակութեան համար», գոհունակութեամբ նշեց ան:

Վատիկանի հետ խնդիրը կարող են արագ լուծել միայն Հայ Առաքելական և Կաթոլիկ եկեղեցիները



Վատիկանը բացում է իր արխիւները: Անհրաժեշտ է դրանցից օգտուելու իրաւունք ձեռք բերել: Վատիկանը կը բացի իր գաղտնի արխիւը 2012թ-ի Փետրուարին: Այս մասին յայտարարել է Վատիկանի արխիւների պատասխանատու մոնսէներ Սերգիօ Պազանին յայտնելով, որ եկող տարուայ փետրուար ամսին բացուելիք “Lux in Arcana” ցուցահանդէսում բազում փաստաթղթեր են ցուցադրուելու, և որ յատկապէս խիստ դաժան է լինելու Հայոց ցեղասպանութեանը վերաբերող բաժինը: Ան հանդէս եկաւ հետեւեալ մեկնաբանութեամբ. «Հայոց ցեղասպանութեան վերաբերեալ վաւերագրերն անհաւատալի և անմարդկային են: Թուրք զինուորների գործած անգութ դաժանութիւններն ուղղակի անտանելի են» Պարզուել է, որ հանրութեանը հասու դառնալիք փաստաթղթերի շարքում կան նաև Հայոց ցեղասպանութեանն առնչուող վաւերագրեր. որոնք կարող են լրջօրէն խաթարել Թուրքիայի մերժողական քաղաքականութեան դիրքերը: Սերգիօ Պազանին նշել է նաև, թէ սոյն արխիւում կը լինեն 8-րդ դարից մինչև 20-րդ հարիւրամեակն ընդգրկող ժամանակաշրջանը, ինչպէս նաև Երկրորդ համաշխարհային պատերազմին առնչուող փաստաթղթեր: Այս մասին տեղեկացնում է թուրքական Հուրրիէթ թերթը: Սակայն խնդիրն այն է, որ Վատիկանի արխիւից օգտուելը ունի դիմումների և թոյլտուութիւնների երկարատև քննակումներ պահանջող կարգ, որը կարող է

անգամ տարիներ տևել: Այստեղ է, որ մեր պատմաբաններին պետք է աջակցեն Հայ Առաքելական և Կաթոլիկ եկեղեցիները, որպեսզի մինչև 2015թ-ը հայ պատմաբանները կարողանան վերլուծել և ամփոփել Վատիկանի արխիվներում եղած փաստաթղթերը, որոնք առնչվում են 1915թ-ի Հայոց ցեղասպանությանը: Armweeklynews.am 06.07.11

«Թուրքերը մասնատում էին հայ մանուկներին, կուրացնում ու սպանում հայ քահանաներին». Վատիկան

21:00 • 10.07.11 Վատիկանի՝ Հայոց ցեղասպանության վերաբերյալ գաղտնի փաստաթղթերը կը հրապարակուեն մէկ գրքում: Այս մասին թուրքական «Վաթան» օրաթերթի հետ զրոյցում ասել է Վատիկանի արխիվների պատասխանատու մոնսենեոր
Սերգիօ Պազանոն:



Պազանոն տեղեկացրել է, որ փաստաթղթերը, մասնաւորապէս, վերաբերում են 1894-1897թթ. Օսմանեան կայսրութիւնում հայերի դէմ իրականացուած ջարդերին: Վատիկանի արխիվների պատասխանատուն նշել է, որ այդ ժամանակահատուածում Հռոմի Պապ Լէօ 13-րդը յորդորել է սուլթան Ապտիւլ Համիտին գրասրտութիւն ցուցաբերել և դադարեցնել հայերի դէմ իրականացուող սպանողը:

Սերգիօ Պազանոն հայկական ջարդերի հետ կապուած երկու ականատեսի վկայութիւններ է տրամադրել «Վաթանին», որոնք թերթը հրապարակել է: Երզրումցի ականատեսի վկայութիւնը.

«Ես տեսել եմ, թէ ինչպէս էին կոտորում մանուկներին: Տեսայ, թէ ինչպէս էր իմ զարմիկ Դոնոն տնից փախչում իր երկու տարեկան երեխայի հետ: Այդ պահին կրակոցով նրան գետնին տապալեցին: Եկան երկու զինուորներ և երեխայի աչքի առջև սպանեցին Դոնոյին... Ես տեսայ, թէ ինչպէս սպանեցին մեր քաղաքի գլխատր քահանային: Նախ հանեցին նրա աչքերը, պոկեցին մօրուքը: Իսկ սպանելուց առաջ զինուորները ստիպում էին նրան պարել»: Մուսթաֆա Սուլէյման անունով թուրք զինուորի վկայութիւնը.



«Մտնում էինք հայկական գիւղերն ու սպանում բոլորին անխտիր: Մեզ հետ եկած քրդերը թալանում էին հայերի տները: Մի քանի տարեցներ և հաշմանդամներ թաքնուել էին քաղաքի կենտրոնում գտնուող դպրոցում: Սակայն, ըստ հրամանի, նրանց էլ սպանեցինք: Գերեվարեցինք և սպանեցինք նաև եկեղեցում թաքնուած մարդկանց: Գելիգուզան գիւղում սպանուեց և այրուեց 800 հայ: Հայր Յովհաննէսի աչքերը հանեցին, մօրուքը պոկեցին, քիթն ու ականջները կտրեցին, որից յետոյ սուիհների վրայ բարձրացրին: Ես ոչ մի երեխայ չեմ սպանել: Նոյնիսկ երկու երեխայի երեք օր շարունակ իմ վրանում եմ թաքցրել: Սակայն մի օր իմ վրանում գտայ այդ երեխաների մասնատուած մարմինները»: Ինչպէս աւելի վաղ տեղեկացրել էինք, Վատիկանը պատրաստուում է առաջիկայում հրապարակել իր գաղտնի արխիւները, որոնցում առկայ են փաստաթղթեր Հայոց ցեղասպանութեան մասին:

Tert.am